Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

321.8
Կ-15

ԻՆՉ ՏՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

А II/9681

М. И. КАЛИНИН
ЧТО ДАЛА
СОВЕТСКАЯ ВЛАСТЬ
ТРУДЯЩИМСЯ
Армгиз — Издательство политической литературы
ЕРЕВАН, 1938

Վոչ հեռու ապագայում Խորհրդային Միության ամբողջ ժողովուրդը, տղամարդիկ և կանայք, սկսած 18 տարեկան հասակից, հավասար, ուղղակի ընտրություններով, գաղտնի քվեարկությամբ ընտրելու են իր ներկայացուցիչները ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում:

Բոլոր հանրապետություններում, երկրներում և մարզերում այժմ ծավալվել է նախընտրական կամպանիան: Շուտով սկսվելու են Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուների առաջադրումը և քննարկումը, Խորհրդային Միության ժողովուրդների առաջ դրված քաղաքական և տնտեսական պրոբլեմների քննարկումը: Մասսաների խիստ քննադատությանը կենթարկվեն իշխանության վատ աշխատող որդանները և խորհուրդների անպետք աշխատողները: Պետք է ենթադրել, որ մի շարք դեմքերում մենք կունենանք հակախորհրդային տարրերի յուրացումներ:

Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ ընտրությունները ե՛լ ավելի կամրացնեն խորհրդային սոցիալիստական իրավակարգը:

Նախընտրական ժողովներում միլիոնավոր ընտրողներ խորհրդային երկրի անցած ուղու հանրագումարը կտան:

Իսկ ի՞նչ է տվել խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ժողովուրդներին իր քսանամյա գոյության ընթացքում: Ի՞նչ են ձեռք բերել խորհրդային իրավակարգի որով Խորհրդային Միության ժողովուրդները: Ավելի ճիշտ՝ ի՞նչ են ձեռք բերել Խորհրդային Միության ժողովուրդներն իշխանության խորհրդային ձևի որով՝ կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո:

Քսան տարին մարդկային կյանքի համար վոքր ժամանակամիջոց չէ։ Սակայն պետության համար, նրա զարգացման համար այդ շատ քիչ է, քանի վոր ժողովրդի զարգացումը շատ ավելի դանդաղ է ընթանում, քան առանձին մարդու զարգացումը։

Եթե մենք հայացք գցենք Եվրոպայի և Ամերիկայի ամենից ավելի կուլտուրական ժողովուրդների զարգացման վրա, ապա կտեսնենք, թե վորքան դանդաղ է ընթանում այդ զարգացումը և այն էլ նա վոչ միշտ է առաջ ընթանում։ Պատմության մեջ քիչ դեպքեր չեն յեղել, յերբ ամբողջ ժողովուրդներ դեգերաց ցիայի յեն յենթարկվել, իսկ յերբեմն էլ պատմության ասպարեզից լիովին անհետացել են։ Բավական է ասել, վոր Չինաստանը մի ժամանակ համարվում եր աշխարհի ամենակուլտուրական պետություններից մեկը։ Իսկ այժմ։ Այժմ Չինաստանը թեպետ և ունի հսկայական տերիտորիա բազմամիլիոն բնակչությամբ,—այնուամենայնիվ նա հետամնաց յերկիր է, վորին իմպերիալիստական գիշատիչները շահագործում են շահվելու նպատակով և պատառ-պատառ են անում։ Ժողովրդի ուղին հետազոտելու համար հարկավոր է գիտենալ նրա սկզբնական դրությունը։

Եվ ահա այդպես ուրեմն, ի՞նչ տվեց խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ժողովուրդներին։ Ես կարծում եմ, գլխավորը, վճռողականը և հիմնականը, վոր տվեց խորհրդային իշխանությունը ժողովրդին—այդ այն է, վոր Խորհրդային Միության ժողովուրդները, սկսած ամենամեծերից մինչև ամենափոքրաթիվները, վորոնք վոչ-հեռավոր անցյալում յեղել են ծեծկված ու շահագործված, այժմ զարձել են իրենց սեփական բարոքության տերը։ Նրանք հնարավորություն են ստացել կռելու իրենց սեփական բախտը։ Զախջախված ու վոչնչացված են շահագործող դասակարգերը և նրանց հետ միասին վոչնչացված են ճգնաժամերը, գործազրկությունը, չքավորությունը և մասսաների քայքայումը, վերացված է մարդուն մարդու ձեռքով շահագործելու հնարավորությունը։ Կոլոնտեսային դյուղացիությունը վոչ միայն ազատված է կուլակների և կալվածատերերի շահագործումից, այլ ապահովված է հողով և ժամանա-

կակից տեխնիկայով։ Հին Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էր, իսկ ԽՍՀՄ՝ ժողովուրդների բարեկամության ցերկիր։

Այս բոլորը մի՞թե չի վկայում այն մասին, որ ԽՍՀՄ բանվորները և գյուղացիները իրենց բախտի միակ տերերն են հանդիսանում։ Ցեկ վոչ վոքի չի հաջողվի խլել այդ բախտը։ Խորհուրդների Ցերկրի ամբողջ ժողովուրդը, մեծից մինչև փոքրը, իր բոլոր ուժերը կտա խորհրդային հողի անձեռնմխելիության համար, Լենինի—Ստալինի գործի համար, կոմունիզմի հաղթանակի համար։ Խորհրդային Միության ժողովուրդներն իրենց բախտը պահում են իրենց սեփական ձեռքերում։ Նրանց յեռանդից, կամքից, հաստատակամությունից, աշխատունակությունից և աշխատանքում ցուցաբերվող համառությունից և կախված նրանց կյանքի նյութական ապահովությունը և կուլտուրական մակարդակի բարձրացումը։

Սա մեծ բարիք է։ Ցերկրագնդի և վոչ մի ժողովուրդ չունի այդ հնարավորությունը։ Նա դրկված է դրանից, նա կաշկանդված է կապիտալիստական տիրապետության շղթաներով, նա կապիտալիստական հասարակության տրուկն է և դրկված է իր նյութական մակարդակի և կուլտուրական զարգացման էական փոփոխությունների վրա ազդելու հնարավորությունից։

Խորհրդային Միության բանվորների, գյուղացիների և աշխատավոր ինտելիգենցիայի նվաճումները նրանով էլ հենց նշանակալից են, որ արդյունք են նրանց համատեղ աշխատանքի։ Կոլեկտիվ աշխատանքը, շատացնելով Խորհրդային Միության հարստությունները, միևնույն ժամանակ բարվոքում է նաև ամեն մի առանձին մարդու բարեկեցությունը։

Անհատական և կոլեկտիվ շահի այդ զուգորդումը, ամեն մի մարդու՝ իր ուժերը լիովին գործադրելու այդ հնարավորությունը—Խորհրդային Միության ամենահսկայական նվաճումն է։

ԻՆՉ ՁԵՌՔ ԲԵՐԻՆ ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Ռուսական բանվոր դասակարգը, համեմատած յեվրոպական բանվորների հետ, ունի սոցիալիզմի գործի համար

մղած պայքարի վոչ յերկար, բայց փառապանծ պատմություն: Կապիտալիստական եկոնոմիկայի զարգացումը Ռուսաստանում ընթանում եր ավելի դանդաղ տեմպերով, քան բանվորական շարժման զարգացումը:

Այդ համեմատարար այնքան էլ վատուց չեր: Ցեռ տեսել եմ այն ժամանակ, յերբ աշխատանքը գործարանում սկսվում եր առավոտյան ժամի 6-ն անց 30 րոպեին և վերջանում եր յերեկոյան ժամի 6-ին՝ ճաշի համար մեկ ու կես ժամ ընդմիջումով: Ֆաբրիկաներում աշխատանքը սկսվում եր առավոտյան ժամի 5-ին և վերջանում եր յերեկոյան ժամի 8-ին՝ ճաշի և նախաճաշի համար 2 ժամ ընդմիջումով: Բանվորները մեծ մասամբ ապրում եյին բարակի տիպի հանրակացարաններում:

Գործարանային կառավարչության կամայականության դեմ յեղած բողոքները շատ դեպքերում անկարմակերպ բնույթ եյին կրում և հաճախ արտահայտվում եյին վարպետներին ծեծելով: Ցերբեմն վարպետների գլուխներին տոպրակ եյին հագցնում և ձեռնատյակով գործարանի դարբասից դուրս տանում: Վարպետներին ծեծելուն մասնակցող մարդկանց բանվորները չնահատում եյին, վորպես գոյություն ունեցող ճնշման և վարպետի անձնական կամայականության դեմ քաջ բողոքողների: Հաստատական դյխավոր վայրերը, վորտեղ հավաքվում եյին բանվորները, գարեջրատները, պանդոկներն եյին:

Բանվորի կյանքը ծայր աստիճան հատարակ եր. ուժասպառիչ յերկար աշխատանքային որը և բնակարանային վատ պայմաններն եյին ռուսական բանվորի բաժինը: Բանվորները համարյա ամբողջ ազատ ժամանակը ստիպված եյին անցկացնել պանդոկներում, գարեջրատներում և թեյարաններում: Բանվորի աշխատավարձը այնքան ցածր եր, վոր հազիվ եր բավականացնում բանվորի ընտանիքի կիսամուրացիկ գոյությունը պահպանելու համար: Մոսկվայի Պրեսնյանսկայա մանուֆակտուրայում, վորտեղ աշխատավարձն ամենից ավելի բարձր եր, այն միջին հաշվով հավասար եր ամսական 20 ռուբլի 50 կոպեկի: Այն ժամանակ համարյա ամեն մի ձեռնարկության մեջ կիրառվում եր տուգանքների

ծաղրող սիստեմը: Նույն Պրոխորովկայա մանուֆակտուրայում բանվորներին տուգանում էին՝

անկարգության համար՝ 50 կոպ.

առանց գրասենյակի գիտության իրեն մոտ վորևէ մեկին դիշերելու թողնելու համար՝ 50 կոպ.

ներքևի դարբասն անցնելու համար՝ 50 կոպ.

բակից բացակայելու համար՝ 50 կոպ.

ժամանակից շուտ վեր կենալու համար՝ 50 կոպ.:

Միքանի «աստվածապաշտ» գործարանատերեր տուգանում էին բանվորներին նաև «յեկեղեցի չգնալու համար»:

Վարպետների վերաբերմունքը դեպի բանվորները համարյա նահապետական բնույթ ունի կրում: Այս կամ այն վարպետի մոտ աշխատում էին մի գյուղի բանվորներ: Կային ամբողջ արհեստանոցներ, վորտեղ աշխատում էին մի գյուղի մարդիկ: Ցերբ գյուղից նոր աշխատող եր գալիս, հայրենակիցները տեղավորում էին նրան գործարանում կամ արհեստանոցում, հասկանալի յե, «սիրաշահելով» իրենց համագյուղացի վարպետին համապատասխան վարձատրությամբ՝ նատուրայով կամ փողով: Վարպետը կաշառք եր վերցնում աշխատանքի ընդունել տալու համար, իսկ յերբեմն էլ բանվորներից փող եր ստանում նաև ավելի բարձրացված աշխատավարձի համար:

Կարելի յեր բազմաթիվ որինակներ բերել, թե ինչպիսի ստորացումներ պետք է կրեր բանվորը այս կամ այն ձեռնարկության մեջ ընդունվելիս: Կոահմանափակվենք այդպիսի որինակներից միայն մեկով: Ահա թե ինչպես եր կատարվում բանվորների ընդունելությունը «Ռուս-ամերիկյան ուսինի մանուֆակտուրայում» (այժմ «Կրասնի տրեուգոլնիկ»):

«Հավաքագրումը կատարվում եր շաբաթական յերկու անգամ—յերկուշաբթի և հինգշաբթի որերը: Դիրեկտորը մայթի յերկայնությամբ կանգնեցնում եր մարդկանց և ման եր գալիս, ընտրում եր, ինչպես մսագործն անասուններին նախիրում, նրանց, վորոնք ավելի ամրակազմ էին, բարձրահասակ էին, խոնարհ և հարգալից էին հարցերում, իսկ դիրեկտորի հետևից—նրա թիկնապահ, ավազակ նշող ֆրանցը, «Դև» մականունով: Ֆրանցը գերմանացի յեր, ռուսերեն

շատ վատ էր խոսում, և միայն բղավում էր. «Այստեղ յեկ, դե՛, այնտեղ գնա, դե՛»: Գեյզեն տոմսակ էր տալիս, իսկ «Դեը» ուղարկում էր միջանցքը, որտեղ վարպետները տեսակավորում էին կտարում»:

Բայց այն ժամանակ էլ արդեն բանվորների մեջ սկսեցին յերևան գալ մարդիկ, որոնք մտածում էին բանվոր դասակարգի կյանքի բարելավման ուղիների մասին: Բանվորների պայքարը կապիտալիստների դեմ ընդունում էր ավելի ու ավելի կազմակերպված և համախմբված բնույթ: Բանվորների գործադուլներն ավելի ու ավելի հաճախ էին դուրս գորգվում բանվորական շարժման ընդհանուր խնդիրների և նպատակների հետ: Կապիտալիստական իրավակարգի դեմ մղվող՝ բանվոր դասակարգի անհաշտ պայքարում ծնվեց, աճեց և ամրապնդվեց Լենինի—Ստալինի կուսակցությունը, կոմունիստական կուսակցությունը:

Բանվոր դասակարգը վերջին տասնամյակներում նախ քան Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, միքիչ բարելավեց իր դրությունը—կրճատվեց աշխատանքային որը, ավելացավ աշխատավարձը, բանվոր դասակարգի վերնախավը հնարավորություն ստացավ միքիչ ավելի լավ ապրելու: Բայց սրա հետ միասին մեծացավ բանվորի նյութական դրության անկայունությունը: Կապիտալիզմի զարգացման հետ միասին ավելի հաճախակի դարձան ճգնաժամերը, որոնց ժամանակ հարյուր-հազարավոր բանվորներ դուրս էին շպրտվում գործարաններից ու ֆաբրիկաներից, գործարանի դարբասների մոտ ավելի ու ավելի յեր մեծանում աշխատանքի պահեստի բանակը:

Ռուսական բանվորն ավելի ու ավելի յեր անապահով պրոլետար դառնում, որն աշխատելով այսոր, բոլորովին համոզված չեր, թե վաղն էլ կաշխատի. ստանալով վորոշ վարձատրություն այսոր, նա բոլորովին համոզված չեր, որ վաղն էլ նույն վարձատրությունը կունենա:

Համեմատելով այժմյան Սովետային Միության բանվորի կյանքը հին ցարական Ռուսաստանի բանվորի կյանքի ու աշխատանքի հետ, մենք տեսնում ենք, թե ինչպիսի անդունդ կա նրանց միջև: Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը,

վոչնչացնելով կապիտալիստների և կալվածատերերի տիրապետությունը, արմատապես փոխեց խորհրդային բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները։ Ցեվ կյանքի ամենակարևոր բարելավումներից մեկը յես համարում եմ այն, վոր բանվորի գլխին այժմ կախված չե մշտնջենական դամոկլյան սուրը,—բանվորը յերկյուղ չունի, վոր վաղը նա անգործ կմնա։ Մեր բանվորների յերիտասարդ և նույնիսկ միջին սերունդն այժմ չի կարող մինչև անգամ մտքով պատկերացնել աշխատանքը կորցնելուց առաջացող այն զզացումը, վոր պրոլետարն ունենում եր անցյալում։ Նույնիսկ բարձրագույն կատեգորիայի բանվորները, վորոնք համեմատաբար ավելի եյին ապահովված վոչ միայն իրենց աշխատավարձի չափով, այլև նրա մշտականությամբ, նույնիսկ այդ բանվորներն ել յերբեք չեյին ազատվում այն մտքից, վոր ամեն րոպե հնարավոր և, վոր կորցնեն իրենց աշխատանքը։ Առանձնապես ուժեղ եր այդ զզացումը ճգնաժամերի և այսպես կոչված դեպրեսիաների ժամանակ։

Բանվորը գործարանում աշխատելով, հասկանալի յե, բաղխվում և տասնապետի, վարպետի, արհեստանոցի պետի հետ։ Կապիտալիստական արտադրության պայմաններում վարպետի և բանվորի շահերը միշտ իրար հակադիր են։ Վարպետն ուզում ե իրն ավելի եժան պատրաստել, քան այն իրոք արժե։ Բանվորն ուզում ե ավելի ստանալ։ Այդ հողի վրա միշտ տեղի եյին ունենում ընդհարումներ։ Վորքան ել թեկուզ բանվորը ձգտեր իրեն համեստ պահել, չզրաղնացնել վարպետին ու համապատասխան մեծավորին, այնուամենայնիվ առորյա աշխատանքներում նա չեր կարող խուսափել այդ ընդհարումներից, իսկ յերբ վրա յե հասնում ճգնաժամը կամ դեպրեսիան, բանվորը հիշում ե վարպետի հետ ունեցած այդ ընդհարման մասին և սպասում նրանից պատիժ ու հեռացում։ Ամեն րոպե աշխատանքից հեռացված լինելու այդ դիտակցությունը մի պատուհաս եր բանվոր դասակարգի համար և ստիպում եր նրան շարունակ զգաստ լինել, միշտ հաշվի առնել վարպետին, կշռադատել իր ամեն մի գործողությունը։ Այդպես եր ցարական Ռուսաստանում, այդպես ե կապիտալիզմի տիրապետության յերկրներում։

Բոլորովին այլ դրություն է մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, որտեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, որտեղ լիովին վոչնչացված է դործազրկությունը, որտեղ բանվորն ու վարպետը հետապնդում են միևնույն նպատակը—որքան կարելի յե լավ ծառայել սոցիալիզմի դործին:

Այն գիտակցությունը, որ յես դործարանում մշտական բանվոր եմ, այն գիտակցությունը, որ յեթե մի դործարանում այս կամ այն պատճառով աշխատանքը պակասի, ինձ կվռնդեն մի այլ դործարան, մշտականության գիտակցությունը, այն գիտակցությունը, որ կոլեկտիվը կարիք ունի իմ աշխատանքին,—մարդուն ինքնուրույն է դարձնում, բարձրացնում է նրա կենսագործունեությունը, հնարավորություն է տալիս բանվորին միանգամայն հանդիստ կերպով իր ազատ ժամանակը նվիրելու հանդստի, զվարճությունների, իր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, հասարակական-քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին:

«Բանվորն ու կոլտնտեսականը լիովին վստահություն ստացան վաղվա որվա նկատմամբ, և իրենց դործադրած աշխատանքի քանակից ու վորակից և միայն կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ աշխատավորի համար անհետացավ դործազրկության, աղքատության ու սովի սպառնալիքը: Վստահորեն ու բերկրալից է նայում ամեն մի բանվոր ու կոլտնտեսական իր ապագային, ավելի ու ավելի բարձր պահանջներ ներկայացնելով դիտությանն ու կուլտուրային»[1]):

Սոցիալիստական Մեծ հեղափոխության այս նվաճումն իր կնիքն է դնում ամբողջ բանվոր դասակարդի վրա, փոխում է նրա բնավորությունը, թերահավատ և վաղվա որվա նկատմամբ անվստահ մարդուց բանվորը դառնում է ակտիվ լավատես: Այս կարելի յե նկատել անթիվ-անհամար որինակներով:

---

1) Համ(բ)կ XVII համագումարի բանաձևերը, էջ 6, Կուսհրատ, 1934 թ.:

Բայց մեր բանվորների լավատեսությունը վոչ մի առընչություն չունի այսպես կոչված «միջին ամերիկացու» լավատեսության հետ, վորն իր կենսական բոլոր պլանները կառուցում է բախտի վրա, անհավատալի դեպքի վրա, անսպասելի յերջանկության, բարենպաստ դասավորվող հանգամանքների վրա: Հարկավո՞ր է արդյոք ասել, վոր այս հույսերը մեծ մասամբ հանդիսանում են միմիայն դատարկ յերևակայություն, վորն անդիտորեն վոչնչացնում են կապիտալիզմի պարմանները: Խորհրդային բանվորի լավատեսությունն ավելի քան հիմնավորված է, վորովհետև դարդրվում է խորհրդային իրավակարգի բուն եյությունից, դարձադում է այն բանից, վոր առանձին բանվորի բարդությունը համար մեզնում շահագրգռված է ամբողջ կոլեկտիվը, ամբողջ բանվոր դասակարգը: Այդ լավատեսությունն ամրապնդված է ԽՍՀՄ Ստալինյան սահմանադրությամբ.— «ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան»: Ի՞նչ լավատեսություն կարող են ունենալ կապիտալիստական յերկրների բանվորները, յեթե նվաղեցրած պաշտոնական տվյալներով ԱՄՆ-ում կապիտալիստական ամենաապահով յերկրում—ավելի քան տաս միլիոն մարդ կա գործազուրկ. Գերմանիայում գործազուրկների բանակը հաշվվում է 3,5 միլիոն, Անգլիայում—2 միլիոն, Լեհաստանում —367 հազար:

Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ռուսական բանվորին բերեց աշխարհում ամենակարճ աշխատանքային ոորը—յոթժամյա աշխատանքային որը: Այս հսկայական նվաճում է, վորի նշանակությունը դժվար է գերագնահատել: Արտադրության մեջ ընդամենը յոթ ժամ զբաղված լինելով՝ խորհրդային բանվորն իր տրամադրության տակ ունի 17 ժամ՝ քնելու, անձնական ու հասարակական կյանքի համար: Այս նշանակում է, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի իր քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար. այս նշանակում է, վոր բանվորը կարող է բավական ժամանակ նվիրել իր ընտանիքին. այս նշանա-

կում է, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի հետևելու իր յերեխաների կուլտուրական զարգացմանը:

Այս բոլորից զրկված եյին ցարական Ռուսաստանի բանվորները: Զրկված են դրանից նաև ամբողջ կապիտալիստական աշխարհի բանվորները:

Ցարական Ռուսաստանի բանվորների զավակները, վորպես կանոն, հսկողությունից զուրկ եյին, իրենց ազատ ժամանակն անց եյին կացնում բանվորական թաղամասերի կեղտոտ հետնախորշերում, լրացնելով քրեական հանցագործների շարքերը. իսկ քիչ մեծանալուց հետո, դեռ դպրոցը չավարտած, գնում եյին գործարաններն ու ֆաբրիկաները վորպես աշակերտ աշխատելու: Ցարական Ռուսաստանի բոլոր բանվորների մի յերրորդը սկսել է աշխատել գործարաններում և ֆաբրիկաներում՝ տասներկու տարեկան չդարձած (նրանցից 10% ֆաբրիկաներն և գնացել դեռևս 10 տարեկան ել չդարձած). բանվորների մյուս յերրորդ մասը սկսել է աշխատել 12—14 տարեկան հասակում: Ցեվ բանվորների միայն մի յերրորդը սկսել և աշխատել տասնհինգ տարեկան հասակից:

Այս ամենը հավիտենականության դիրքն է անցել: Այժմ աշխատավորների զավակները հնարավորություն ունեն կուլտուրապես ապահովված լինելու: 1937 թվին ԽՍՀՄ միջնակարգ և տարրական դպրոցներում սովորում է մոտ 30 միլիոն յերեխա: ԽՍՀՄ քաղաքացին բոլորովին հանգիստ է իր յերեխաների ուսման վերաբերմամբ: Դրա համար կան ճրի դպրոցներ, ուր նա որենքով նույնիսկ պարտավոր է ուղարկել իր յերեխաներին: Ամեն մի յերեխայի հետաքրքրությունը ամբողջապես կախված կլինի նրա ընդունակություններից և հակումներից:

Այս մեզ մոտ դրամի չի վերածվում, այս պարզապես չի հաշվառվում բանվորի բյուջեյում, իսկ մինչդեռ այս պետական ծախսերի մեջ հսկայական հոդված է: Բավական է ասել, վոր հին Ռուսաստանում միջնակարգ դպրոցի ուսման վարձը համեմատաբար բարձր չեր, և այնուամենայնիվ մի յերեխայի ուսուցումն արժենում եր տարեկան 250 ռուբլուց վոչ պակաս՝ վորակյալ բանվորի ամսական 40—45 ռուբլի

միջին աշխատավարձի ժամանակ։ Այստեղից հասկանալի է, թե ինչու միջնակարգ ուսումնական հաստատություններում բանվորների յերեխաներ համարյա թե չկային։

Սոցիալիստական հեղափոխության վոչ փոքր նվաճումներից մեկն է բանվորների ապահովագրումը հիվանդության, անաշխատունակության և ծերության դեպքերում։ Ի՞նչ է նշանակում ձրի բժշկական ոգնություն։ Ցես վորակյալ բանվոր եյի, իմ վաստակը բանվորի միջին աշխատավարձից բարձր եր։ Մի անգամ յես հիվանդացա գործարանում։ Ցերկու ամիս պառկած եյի հիվանդ և այդ ժամանակվա ընթացքում ապահովագրական դանձարկղից ստացա ընդամենը 15 ռուբլի, մինչդեռ իմ ռոճիկից պահում եյին ապահովագրման 1½%։ Ավելացրեք դրան բժշկի վարձը, դեղերի արժեքը, և ձեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի դրության մեջ ընկա յես, վորակյալ բանվոր։ Հիվանդության 2 ամիսը, ինչպես առաջ ասում եյին, ինձ խստակ բռնեցին։

Վերցնենք նյութական ապահովումը ծերության և աշխատունակությունը կորցնելու դեպքում։ Քանի դեռ մարդ յերիտասարդ է, ուժեղ է, նա այդ հարցով չի հետաքրքրվում։ Հին Ռուսաստանում այսպես եր լինում.—վորակյալ բանվորն ստանում եր համեմատաբար վոչ վատ աշխատավարձ։ Բայց ահա նա ծերացավ։ Ի՞նչ կարելի յեր անել։ Ցեթե նա գործարանում յերկար տարիներ եր աշխատել, յեթե նրան համարում եյին գործարանային վարչության հավատարիմ ծառա, ապա նրան վորակյալ աշխատանքից փոխադրում եյին կամ պահակի կամ արհեստանոցի հավաքարարի պաշտոնի։ Դրա համեմատ, իհարկե, պակասում եր նաև նրա աշխատավարձը։ Սակայն չե՞ վոր այսպիսի դրության արժանանում եյին միմիայն «յերջանիկները», միայն նրանք, վորոնց հատուկ բարյացակամությամբ եր վերաբերվում վարչությունը։ Իսկ ծերունիների մեծ մասն արձակվում եր աշխատանքից։ Կապիտալիստի համար բացարձակապես միևնույն է, թե ինչպես կապրի իր արձակած բանվորը, այն բանվորը, վորը 30—40 տարիների ընթացքում հարստացնում եր իրեն։ Հեռացված բանվորն իր ծերունի գոյությունը քարշ եր տալիս կամ իր զավակների ոժանդա-

կությամբ, յեթե նրանք փոքրիշատե ապահովված եյին լինում, կամ թե ուղղակի մի կերպ գլուխը պահում եր և մինչև իսկ մուրացկանություն անում:

Այդպես եր վոչ միայն նախկին ցարական Ռուսաստանում, այդ տեղի յե ունենում նաև այժմ սմբողջ կապիտալիստական աշխարհում: Վորչափ ավելի զարգացած է կապիտալիզմը, այնքան ել ըստ տարիքի ավելի շուտ և դուրս շպրտվում գործարանից բանվորը, վորպես չահագործման համար քիչ պետքական մի առարկա: Ահա ձեզ բանվորի կապիտալիստական «ապահովվածությունը» նրա ծերության ժամանակ:

Այլ դրություն է մեզ մոտ: Ամեն մի խորհրդային ազնիվ քաղաքացի որենքով ապահովվում է իրեն պատկանող կենսաթոշակով: Պարզ է, վոր այս փաստերից յելնելով, կապիտալիստական աշխարհի և մեր մարդկանց հոգեբանությունը բոլորովին տարբեր են իրարից:

Ճիշտ է, մեզ մոտ ել կան «խելոքներ», վորոնք, համեմատելով մեր բանվորի բնակարանն ու սնունդը ամերիկացի բանվորի բնակարանի և սնդի հետ, ասում են, վոր ամերիկացի բանվորն ավելի միս է ուտում, ունի ավելի լավ բնակարան: Ցեսս ընդունում եմ, վոր Ամերիկայի բանվոր դասակարգի ամենագործունյա մասը իր ուժերի ծաղկման շրջանում գուցե ավելի շատ շոկոլադ է ուտում, քան ռուսական բանվորը: Բայց չէ՞ վոր պետք է հաշվել վոչ միայն շոկոլադի կտորները, պետք է հաշվել և այն հսկայական նյութական-կուլտուրական սպասարկումը, վոր ունեն Խորհրդային Միության աշխատավորները՝ հանգստի տներ, սանատորիումներ, մանկապարտեզներ և մանկամսուրներ, արձակուրդներ հղիության պատճառով և այլն: Սրան պետք է ավելացնել հսկայական թվով թատրոնական-յերաժշտական կազմակերպությունները գործարաններում, ձրի համերգները, եքսկուրսիաները և այլն, և մենք կտեսնենք, վոր յեթե այս բոլորը դումարենք մի տեղ, ինչպիսի հսկայական տարբերություն կա ԽՍՀՄ բանվոր դասակարգի դրության մեջ՝ համեմատած վորևե կապիտալիստական յերկրի բանվոր դասակարգի դրության հետ: Պատահական չէ, վոր մեր բոլոր

թատրոնները լեփ-լեցուն են լինում: Ի՞նչ է վկայում այդ: Այդ վկայում է Խորհրդային պետության աշխատավորական մասսաների նյութական ունևորության զգալի բարձրացման մասին, այդ վկայում է մասսաների կուլտուրական պահանջների բացառիկ աճման մասին: Այդ վկայում է այն մասին, որ մեր աշխատավորական մասսաները դառնում են աշխարհի ամենակուլտուրական մասսաները:

Այս բոլորը Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակների արդյունքն է: Այս բոլորը բանվորներին տվեց խորհրդային իշխանությունը: Խորհրդային իշխանությունը բանվոր դասակարգին Խորհրդային Միության ունեցած բոլոր հարստությունների տերը դարձրեց: Նյութական և կուլտուրական արժեքների զարգացման ամենամեծ առաջադիմական քայլը դառնում է աշխատավոր մասսաների սեփականությունը: Որքան ավելի է զարգացած կապիտալիզմը, այնքան աղքատ, անապահով է դառնում բանվորը: Որքան ավելի հզոր և հարուստ է դառնում մեր Հայրենիքը, այնքան ավելի ունևոր և կուլտուրական է դառնում աշխատավոր մասսաների կյանքը:

Ահա թե ինչ է տվել ժողովրդին խորհրդային իշխանությունը: Ահա թե ինչումն է խորհրդային իշխանության ուժը: Ահա թե ինչու բանվոր դասակարգը, լինելով ստեղծողը, կազմակերպիչը և գլխավոր մարտիկը, հանուն խորհրդային իշխանության, ամբողջ իր հզորությամբ ամուր պահում է և աչալուրջ պահպանում իր խորհրդային իշխանությունը:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀԵՆԱՐԱՆՆ Է

Խորհրդային իշխանության համար մղած պայքարին, նրա ստեղծագործական ուժերի զարգացմանը բանվոր դասակարգի հետ միասին մասնակցություն է ցույց տվել և գյուղացիությունը: Խորհրդային իշխանության ամենամոխերիմ թշնամիները հույս ունեցին, որ Խորհրդային Միու-

թյան դյուղացիությունը, վորը բաղկացած է դլխավորապես մանր սեփականատերերից, չի դնա բանվոր դասակարդի հետևից, չի դնա կոմունիստական կուսակցության հետևից, վոր կոլեկտիվացման անցնելիս նա չի հաշտվի արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը կորցնելու հետ և կդնա խորհրդային իշխանության դեմ: Այս նոմերը չանցավ: Այժմ արդեն նույնիսկ յերեխայի համար էլ պարդ է, վոր դյուղացիությունը կոմունիզմի պայքարի գործում դարձել է բանվոր դասակարդի ընկերակիցը:

Կապիտալիստները կոմունիզմից վախենում են, ինչպես սատանան խնկից, և իրենց յերկյուղը ուղում են տարածել աշխատավոր մասսաների, առանձնապես դյուղացիության վրա: Վո՛չ: Կոմունիզմը զազրելի յե միայն կապիտալիստների համար, իսկ աշխատավոր մասսաների համար կոմունիզմը ջահ է, փարոս է, վորը ցույց է տալիս կապիտալիստական սարկությունից նրանց դեպի ազատագրում տանող ուղին: Այս մասնավորապես ցույց տվեց և խորհրդային դյուղացիությունը, վորը հաստատապես և անդառնալիորեն կանգնեց կոլտնտեսական կյանքի ուղու վրա:

Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—7 թվականների ռուսական առաջին հեղափոխության ժամանակ» վերտառությամբ իր գրքում գրել է. «10 միլիոն դյուղացիական տնտեսություններն ունեն 73 միլիոն դեսյատին հող, 28 հազար ազնվազարմ և վենթի լենդլորդերը՝ 62 միլիոն դեսյատին: Այսպիսին է հիմնական ֆոնը այն դաշտի, վորի վրա ծավալվում է դյուղացիական պայքարը հողի համար»[1]:

Շատ բան է տվել խորհրդային իշխանությունը դյուղացիությանը, վորը դարերով զրկված է յեղել, անդուսպ ավազակների, կալվածատերերի և դյուղական կուլակ-ցեցերի ձեռքով: Դյուղացիական շատ զավակներ են վոչնչացել հողի համար մղվող դարավոր պայքարում: Բայց միայն խորհրդային իշխանության որով դյուղացիներն իրենց

---

1 Լենին, հատ. XI, եջ 337:

նպատակին հասան, ստանալով ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր։ Այդ հողը կարելի յեղավ ստանալ միայն այն բանի հետևանքով, որ բանվորներն ու գյուղացիները վոչնչացրին կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը, ջախջախելով նրանց ռազմի դաշտերում։

Յեթե 150 միլիոն հեկտարի արժեքը վերածենք դրամի, ապա այդ կկազմի միլիարդներ՝ խլված կապիտալիստներից և կալվածատերերից, որոնք իր ժամանակին կողոպտել են գյուղացիներին։ Սակայն բանը միայն այդ դումարը չե։ Ի՞նչ է նշանակում՝ գյուղացիներն ստացել են ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր։ Այդ նշանակում է, որ գյուղացիներն իրենց վրայից թոթափել են կալվածատիրական շահագործման կապանքները, թոթափել են իրենց վրայից կալվածատերերի և կուլակների ամենորյա ճնշումը։ Զե՞ վոր շնորհիվ այդ հողի կուլակները և կալվածատերերը գյուղացուն դրել էին կյանքի անտանելի պայմանների մեջ։ Ճնշման ձևերը, կուլակների և կալվածատերերի կողմից այդ հողերից ոգուտ քաղելը յեղել են անվերջ բազմազան։ Կալվածատերը լճակ ունի. այդ լճակից ոգտվում է գյուղի տավարը։ Դրա դիմաց գյուղացիները պարտավոր էին աշխատել կալվածատիրոջ համար։ Այն հողամասը, որի վրայով գյուղացիներն իրենց դաշտերն են քշում անասուններին, գտնվում է հենց կուլակի հողամասի վրա,—բարեհաճիր դրա համար վճարել կուլակին։ Կալվածատիրոջ կամ կուլակի հողամասը հասնում է մինչև գյուղացիական խրճիթները։ Պատահմամբ այդ հողամասն և ընկնում գյուղացու հալը՝ բարեհաճիր նաև դրա համար վճարել։

«Գյուղացուն հասցրել էին մուրացիկի կյանքի մակարդակին. նա ապրում եր անասունների հետ միասին, հագնում եր ցնցոտիներ, կերակրվում թելուկով։ Գյուղացին փախչում եր իր հողարաժնից, յեթե միայն փախչելու տեղ եր լինում, նույնիսկ փրկագնվելով իր հողարաժնից, հողաբաժինը վերցնել համաձայնողին վճարելով այն մուծումները, որոնք դերազանցում էին հողարաժնի յեկամտից։

Ա 9681 1448

Գյուղացիները չարունակարար սովահար եյին լինում, տասնյակ-հազարներով մեռնում եյին սովից և համաճարակներից անբերրիության ժամանակ, վոր կրկնվում եր ավելի ու ավելի հաճախակի»[1]:

Կալվածատիրոջ անտեսության մոտ լինելը գյուղական խրճիթներին՝ իսկական դժբախտություն եր գյուղի համար: Վորքան ավելի մեծ եր լինում կալվածատերերի թիվն այս կամ այն գավառում, այնքան ավելի ռեակցիոն եր լինում տեղական կառավարչությունը: Ամենալավ որինակը կարող եր ծառայել Կուրսկի նահանգը: Այստեղ եր կալվածատերերի ամենամեծ թիվը, առավել աղքատ, անդրագետ, ճնշված ռուս գյուղացիությունը, հենց այստեղ եր ամենառեակցիոն զեմստվոներից մեկը: Մոտավորապես նույնպիսի պատկեր եր ներկայացնում Ուկրաինան, վորտեղ խոշոր կալվածատերերը տարեցտարի հաղարավոր գյուղացիական ընտանիքների հարկադրում եյին տեղափոխվել Հեռավոր Արևելք և ովկիանոսի մյուս կողմը, Ամերիկա:

Շատ բան և ավել խորհրդային իշխանությունը գյուղացիությանը, վոչնչացնելով կալվածատիրոջը և ցեց կուլակին:

Գյուղում կոլեկտիվացում անցկացնելով, խորհրդային իշխանությունը լուծել է սոցիալիստական հեղափոխության ամենաբարդ խնդիրներից մեկը: Կոլեկտիվացման պրոցեսը շատ դժվար եր: Այդ միանգամայն բնական է: Մարդիկ դարերով ընտելացել եյին վորոշ կենցաղավարության, իսկ կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը կանչում եյին նրան դեպի «անհայտը», կոլեկտիվացում եյին մտցնում: Մեզ համար հասկանալի եյին գյուղական մասսաների յերկյուղը, նրանց ծանր մտածմունքները...

Կոլեկտիվացում մտցնելուն հակառակում եյին բոլոր հակախորհրդային տարրերը, ժողովրդի բոլոր թշնամիները, բոլոր նրանք, ովքեր դեռ փոքր հույս ունեյին հին կապիտալիստական իրավակարգի վերադարձի նկատմամբ:

---

1 Լենին, հատոր IV, եջ 101:

Նրանք քիչ բան չարին կոլեկտիվացման գործի վիժեցման համար:

Այնուամենայնիվ հաղթանակեց առողջ դատողությունը, չքավոր և միջակ գյուղացիության հավատարմությունը բանվոր դասակարգին: Տեղի ունեցավ չքավոր-միջակ մասսաների արմատական շրջադարձը դեպի կոլտնտեսային շինարարության կողմը: Կոլեկտիվացումը փայլուն կերպով անցկացվեց: Կուլակությունը—կապիտալիստական վերջին դասակարգը—վերջնականապես ջախջախվեց: «Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ առնվազն քսան միլիոն գյուղացի բնակչություն, առնվազն քսան միլիոն չքավորների մենք փրկեցինք աղքատությունից ու ավերումից, փրկեցինք կուլակային ստրկությունից և կոլտնտեսությունների շնորհիվ դարձրինք ապահովված մարդիկ»[1]:

Ի՞նչ բան է կոլեկտիվացումը: Վորո՞նք են նրա առավելությունները անհատական գյուղացիական տնտեսության հանդեպ: Ցեսս կարծում եմ, վոր այժմ ամեն մի կոլտնտեսական ավելի համոզեցուցիչ կերպով, քան յես, կարող է ապացուցել այդ առավելությունները: Ցեսս միայն կհիշեցնեմ բոլորին հայտնի ճշմարտությունը՝ կոլեկտիվացումը հնարավորություն տվեց կուլտուրական դարձնելու գյուղի խամռած, վատ մշակվող, խոպան հողերը: Այս մեծ նվաճում է: Այս հաղթության պտուղները մենք քաղում ենք այս տարի: Նախնական հաշվումներով մենք այժմ ունենք մոտ 7 միլիարդ փութ հաց: Կարծում եմ, ամեն մի խելամիտ կոլտնտեսական մատիտը ձեռքին կարող է հաշվել, վոր հողի անհատական յեղանակով մշակելու ժամանակ ամենամեծ բերքի տարիներին մենք չեյինք կարող ստանալ այսպիսի բերք: Այս ել հենց բնական է: Զպետք է մոռանալ, թե ինչ է նշանակում հողի անհատական յեղանակով մշակում: Այդ նշանակում է, վոր ամեն մի գյուղացի ամեն մի դաշտում ունի միքանի հողաշերտ: Մեկը հողը լավ

---

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 659, 10-րդ հրատ., Հայկուսհրատ, 1935 թ.:

և մշակում, մյուսը՝ վատ։ Մեկի ձին լավն է, մյուսինը՝ անպետք։ Մեր գյուղացիները շատ լավ են հիշում, թե ինչպես նրանք իրարից հող էին գողանում։ Զուր չէ, վոր ժողովուրդը այդ հավերժացրել է առածով՝ «Միջնակն ու սահմանը կռիվ են ու նախատինք» («Межи да грани—ссоры да брани»)։ Նա, ով առաջինն եր հերկում, հարևանի հողամասից մի շերտ պոկում ու գցում եր իր հողամասի վրա, վորից միշտ տուժում էին չքավորները։

Կոլեկտիվացումը վոչնչացրեց հողաշերտերի միջև յեղած ակոսները, վոչնչացրեց միջնակները, վորոնք գրավում էին ամբողջ հողի մոտավորապես 3–ից—5%–ը, մոլախոտերի մշտական բուծարան էին հանդիսանում։ Այնուհետև, մի գյուղացի ցանում է մի տեսակ հաց, մյուսը՝ այլ տեսակ։ Մի գյուղացու սերմերը տեսակավոր են, մյուսինը՝ աղտոտ։ Մեկի հացն արդեն հավաքվում է, մյուսինը դեռ բոլորովին կանաչ է։ Մեկը վարսակ է ցանում, մյուսը, կողքին՝ կարտոֆիլ։ Գյուղական տնտեսության մեջ յեղած այս խառնաշփոթությունը, վորն անհնար եր վերացնել անհատական, մանր տնտեսության որով, գյուղական դաշտերը դարձնում եր անխնամ և սակավ բերքատու։

Կոլեկտիվացումն ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները գյուղական տնտեսության մեջ տեխնիկական հեղափոխություն կատարելու համար։ Մի՞թե կարելի յեր ՍՐակտորը բանեցնել գյուղացիական նեղ հողամասերի վրա։ Մի՞թե կարելի յեր այդ հողամասերի բերքահավաքին դեթ վորևե չափով գործադրել, որինակ, կոմբայնը։ Ընդհանրապես ասած, գյուղացիական անհատական տնտեսությունը հավիտենական արգելակ եր գյուղատնտեսության մեջ մեքենային մշակում մտցնելու գործում։ Միայն կոլեկտիվացումը հնարավորություն տվեց հողը կուլտուրապես մշակելու, ոգտագործելով գիտության և տեխնիկայի բոլոր նվաճումները։ Կոլտնտեսային և խորհտնտեսային դաշտերը միմիայն 1937 թ. ստացան մեկ միլիարդ 200 միլիոն ռ. գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1936 թ. գյուղատնտեսական մեքենաշինարարության ամբողջ արտադրանքի արժե-

քը, տրակտորաշինարարության հետ միասին, հավասար էր 2 միլիարդ 260 միլիոն ռուբլու:

Կոլեկտիվացման հաղթանակը պատմական հաղթանակ է: Ի՞նչ է տալիս նա ժողովրդին: Նա գյուղացիներին ազատում է մի շարք բացառիկ ծանր ֆիզիկական աշխատանքներից: Բավական է հիշել արորով, կամ այսպես կոչված Ռյազանի գութանով հերկելը, կալսումը, հունձը—աշխատանքներ, որոնք գյուղացիական հսկայական աշխատանք էին կլանում, տալով վերին աստիճանի ցած արտադրողականություն: Իսկ այսօր մեր դաշտերում աշխատում են 450 հազար տրակտոր և 121 հազար կոմբայն: Գյուղացիական անհատական աշխատանքը հսկայական ժամանակ էր խլում գյուղացուց: Նրա տնային առորյա աշխատանքները հնարավորություն չէին տալիս գյուղացուն դեթ մի բոպե մտածելու իր դրության մասին՝ որպես սեփության քաղաքացու, մտածելու իր քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին: Անհատական աշխատանքը փոքրիկ հողամասի վրա, վաղվա որվա նկատմամբ շարունակ անվստահ լինելը՝ նեղացնում էին գյուղացու մտահոգիզոնը, սահմանափակում էին նրա մտավոր շահագրգռությունը, ընթացնում էին նրան: Ցեմ գյուղացու այս խղճուկ սեփականությունն ուզում էր ոգտագործել հակահեղափոխությունը:

Խորհրդային իշխանությունն աճեցրել և անվանի կոմբայնավար Կոնստանտին Բորինին, որն իր կոմբայնով հավաքել է 2 հազար հեկտար հատկավոր կուլտուրաներ: Այդ նշանակում է, որ Բորինի կոմբայնի բունկերով անցել է ամենաքիչը 180 հազար փութ հացահատիկ: Ցեթե յենթադրենք, որ Բորինի ագրեգատը յուրաքանչյուր որ հավաքել է 75 հեկտար, ապա դուրս կգա, որ մի ագրեգատով Բորինը որական փոխարինել է 950 մարդու, 150 ձիու, 37 քամհարի և 20 ձիու կալսիչների: Սա այն դեպքում, յեթե որ 75 հեկտարի բերքահավաքը կատարվեր ձեռքով, իսկ կալսումը—ձիու կալսիչներով:

Խորհրդային իշխանությունն աճեցրել է Պետրովին (Կլյուչևսկի ՄՏԿ), որը որական հավաքում է 23 հեկտար

վուշ: Վուշի այս ամբողջ քանակը ձեռքով պոկելու համար հարկավոր էր գործադրել 230 մարդու ծանր աշխատանք:

Կոլեկտիվացումը գյուղատնտեսության մեջ մտցրեց առաջավոր տեխնիկա: Կոլեկտիվացումը ամեն մի գյուղացուց պահանջեց ավելի մեծ կազմակերպվածություն և իր աշխատանքի զուգորդումը համագյուղացիների աշխատանքի հետ: Կոլեկտիվացումը նպաստում է գյուղում խորհրդային ինտելիգենցիա ստեղծելուն: Նա առաջ քաշեց գյուղում կոմբայնավարներ, տրակտորիստներ, մեխանիկներ, խրճիթ-լաբորատորիաների լաբորանտներ, կոլտնտեսության նախագահներ, բրիգադիրներ, դրասենյակային աշխատողներ: Գյուղացին առաջ իրեն անվանում էր հողագործ: Այդ ճիշտ էր: Նա իր քոսոտ ձիու հետ միասին քչփորում էր հողը: Իսկ ա՞յժմ: Ահա մի օրինակ. Խորհուրդների Համամիութենական Արտակարգ համագումարի պատգամավորների թվում 13%-ը տրակտորիստներ էին, 8%-ը—կոմբայնավարներ, 26%-ը— կոլտնտեսությունների նախագահներ, 10%-ը—բրիգադիրներ, 20%-ը—ողակավարներ, 6%-ը—անասնաբուծական ֆերմաների վարիչներ, 12%-ը—կով կթողներ, հորթատաղ և խոզ պահող կանայք, 2%-ը—հովիվներ, 3%-ը—թեյ, բամբակ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ հավաքողներ: Մի՞թե սա ցուցանիշ չէ այն բանի, որ «խորհրդային գյուղացիությունը միանգամայն նոր գյուղացիություն է, որի նմանը դեռ չի իմացել մարդկության պատմությունը»[1]:

Շնորհիվ կոլեկտիվացման գյուղական կյանքը արագորեն սկսեց նմանվել քաղաքի բնակչի կյանքին, գյուղացու մտահորիզոնը ընդլայնվեց: Վիթխարի չափով աճեց գյուղի ամբողջ կուլտուրան: Առաջներում գյուղացուն անասելի դժվար էր հասնել մարդկային դիտելիքների բարձունքներին: Միակ ուղին—դա չարչիության ուղին էր, որով միլիոնավոր գյուղացիներից միայն հատուկենտ մարդիկ էին կարողանում վաճառական դառնալ գուլպողության և ա-

---

1 Ի. Վ. Ստալին, ՍՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 16, Հայկուսհրատ, 1936 թ.:

մեն տեսակ խարդախությունների միջոցով։ Միջակ գյուղացին միայն յերազել կարող եր վոչ միայն միջնակարգ դպրոցի, այլև ընդհանրապես դպրոցի մասին։ Այժմ գյուղը համարյա հավասարվել է քաղաքին—նա ունի վոչ միայն տարրական, այլև միջնակարգ կրթության դպրոցների բավականին խիտ ցանց։ Մեքենայացված արտադրությունը գյուղում ինքնին նպաստում է նախաձեռնության զարգացմանը, գյուղացիների զավակների ինքնավստահությանը գիտության, տեխնիկայի և արվեստի մեջ։ Կարմիր բանակի հրամանատարական կազմում, խորհրդային որդանների, ձեռնարկությունների ղեկավարման, գյուղատնտեսության ղեկավարման գործում գյուղացիները և գեղջկուհիները պատվավոր տեղ են գրավում։

Հիշա ճանապարհ չի անցել գյուղացությունն այս քսան տարվա ընթացքում։ Մանր սեփականատիրությունից գյուղացին դարձել է կուլտուրական, ունևոր կյանք ստեղծող կոլեկտիվիստ։ Կոլտնտեսությունները գյուղացուն հնարավորություն տվին խորհրդային հսկայական դաշտերի իրական տերը դառնալու, հնարավորություն տվին ստեղծելու այդ դաշտերում այնպիսի արժեքներ, վոր վոչ միայն չքավորը, այլև նախկին կալվածատերն էլ յերազում չեր տեսել։ Գյուղացին դարձավ իսկական տերը, իր սեփական յերջանկությունը ստեղծագործողը։ Այս բոլորը տվել է խորհրդային իշխանությունը։

Կոլտնտեսական գյուղացիները հանդիսանում են իրենց հայրենիքի հավասարիմ զավակները, խորհրդային իշխանության ամուր հենարանը։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Դեռ 1894 թվին Լենինը գրել է այն մասին, վոր ինտելիգենցիայի կազմը բնորոշվում է հետևյալ ձևով.—յեթե հասարակության մեջ «թագավորում և ղեկավարում է կապիտալիստը», ապա ինտելիգենցիայի մեջ «տոն է տալիս կարյերիստների և բուրժուազիայի վարձկանների ավելի ու ավելի աճող ամբոխը[1]...»։

---

1 Լենին, հ. I, էջ 262, Հայկուսհրատ, 1930 թ.։

Ինտելիգենցիայի վերին խավերը—խոշոր չինովնիկները, բժիշկները, իրավաբանները—իրենց արմատներով սերտորեն կապված էին խոշոր կապիտալիստական և կալվածատիրական տարրերի հետ։ Այդ ինտելիգենցիայի մասին Լենինը կարճառոտ ասում է. նա «փնտռում է միայն նրան, ով իրեն կկերակրի»[1]։ Ո՞վ կարող էր նրան կերակրել։ Ո՞ւմ մոտ էր նա ծառայության մտնում։ Միանգամայն հասկանալի է, որ ոչորդ հարուստ դասակարգի մոտ, նրանց պետք է նա ծառայեր—«վորովհետև նրա համար այլ ելք չկար»[2]։

Մեր հին ինտելիգենցիան կարծում էր, որ ինքը կանգնած է դասակարգերից վեր և արտահայտում է ժողովրդի շահերն ամբողջությամբ վերցրած։ Այդ մասին առաջ շատ էր գրվում։ Իսկ ըստ էության նույնիսկ նրա ամենադեմոկրատիկ մասն արտահայտում և պաշտպանում էր իր ընակչության մանր-բուրժուական խավերի շահերը։ Հասկանալի է, դրանով չես չեմ ուզում ասել, որ ինտելիգենցիան իր միջից չի տվել ժողովրդական գործի համար մարտիկներ։

Մինչհեղափոխական ինտելիգենցիայի հիմնական մասը համակված էր բուրժուական աշխարհայացքով։ Հիշեցե՛ք նախկին ինտելիգենցիայի կազմը։ Ֆելդշերներ պատահում էին յերբեմն և հասարակ գյուղացիներից կամ բանվորներից, բայց իրենց ֆելդշերական կրթությունը նրանք ստանում էին գնդերում։ Գյուղերում նրանց ծաղրանքով անվանում էին «ձիու ֆելդշերներ», «ձիաբույժներ»։ Մանկաբարձուհիներն արդեն մանր-բուրժուական միջավայրից, առավելապես կուլակային ընտանիքներից յելածներ էին։ Ուսուցիչները իրենց մասասայով առած քահանաների, կուլակների, մանր չինովնիկների և այլոց զավակներ էին։ Շատ հազվադեպ էին պատահում ուսուցիչներ միջակ գյուղացու ընտանիքից, ել չեմ խոսում չքավոր ընտանիքի մասին։

Ինտելիգենցիայի այս դեմոկրատիկ մասն իր դրությամբ ամենից ավելի յեր կապված գյուղի ունևոր վերնախավի

---

1. Լենին, հ. I, եջ 197, Հայկուսհրատ, 1930 թ.։

2 Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, եջ 16, Հայկուսհրատ, 1936 թ.։

հետ։ Այդ կարելի է յեղրակացնել թեկուզ հետևյալ պարզ փաստից. ամեն մի յեկեղեցական տունն՝ դյուղի ուսուցիչը, ֆելդշերը, դարբին-անտեսատերը, ջաղացպանը և մյուսները հավաքվում եյին, վորպես կանոն, հարուստ դյուղացիների մոտ։

Ամբողջությամբ վերցրած ինտելիգենցիան շատ հեռու յեր ժողովրդից։ Նույնիսկ 70-ական թվականների նարոդովոլեցների վրա, վորոնք «դնում եյին ժողովրդի մեջ», ժողովուրդը նայում եր, ինչպես «սպիտակ վոսկրի» ներկայացուցիչների վրա, հավատ չեր ընծայում նրանց՝ ինչպես տիրող դասակարգի միջից յելածների և առանձին դեպքերում նրանց հանձնում եր իշխանություններին։

Ռուս ինտելիգենցիայի, առանձնապես նրա դեմոկրատիկ մասի դրությունը, եվ չեմ խոսում հին ցարական Ռուսաստանի մյուս ժողովուրդների ինտելիգենցիայի մասին, վոչբերդական եր։ Ցարական իշխանության որդանների և կալվածատիրական ռեակցիան դեմատվոյում լինելով ստորադաս պաշտոններում, դեմոկրատական ինտելիգենցիան, տեսնելով ժողովրդի հսկայական դժբախտությունները, չեր կարող եյականորեն ոգնել նրան, և մանավանդ վոր իսկական յելքը չեր իմանում։ Նա չեր տեսնում այն դասակարգը, բանվոր դասակարգը, վորը դլխավորել եր պայքարը ցարական ինքնակալության և ամբողջությամբ առած կապիտալիզմի դեմ։ Ռուս դեմոկրատ ինտելիգենտի այդ վոչբերդությունը պայծառ շլիֆի պես անցնում է ամբողջ ռուսական դրականության միջով։

Առավել առաջավոր, հեղափոխականորեն տրամադրված ինտելիգենցիան անցնում եր ժողովրդի կողմը, իսկ բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետագա զարգացումը նրա լավագույն դավակներին դրավեց մարտնչող պրոլետարիատի շարքերի մեջ, վորը գիտական սոցիալիզմի գաղափարների միակ հետևողական մարտիկն է։

Ինտելիգենցիայի զդալի մասի նվիրված լինելը բուրժուական կապիտալիստական իրավակարգին՝ սուր կերպով յերևան յեկավ, յերբ բոլշևիկները դրավեցին իշխանությունը։ Ինտելիգենցիան լցվում եր եսերների, մենշևիկների և

այլ ավանդապահական–քաղաքական խմբերի մեջ, վորոնք զենքը ձեռքին կռվում էին խորհրդային իշխանության դեմ։ Ինտելիգենցիայի զգալի, յեթե վոչ մեծ մասը, սարոտաժով դիմավորեց խորհրդային իշխանությանը։

«Առանց մեզ չեն կարող յուր գնալ»,—մտածում էին կապիտալիստներին և կապիտալիստական պետությանը ծառայելու սովոր ինտելիգենտները։ Սակայն այդ դատարկ յերազապատրաստություն եր։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում Լենինը հայտարարեց.—«Բանվոր դասակարգը ապացուցեց, վոր ինքը կարողանում է առանց ինտելիգենցիայի և առանց կապիտալիստների արդյունաբերություն կազմակերպել»[1]։

Պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու ժամանակվանից անցել է քսան տարի։ Հին ինտելիգենցիան այժմ, իր ճնշող մեծամասնությամբ կանգնած լինելով խորհրդային իշխանության դիրքերի վրա, ապնվորեն, ամբողջ ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիստական շինարարությանը։ Նրա կողքին աշխատում են բանվոր դասակարգի և գյուղացիության ընդերքից դուրս յեկած, խորհրդային իրավակարգի պայմաններում ձևավորված, տաղանդավոր և հարյուր–հազարավոր յերիտասարդ մասնագետներ։ Այս նոր խորհրդային ինտելիգենցիան որդանապես, սերտորեն և անմիջականորեն կապված է ժողովրդի հետ։

Բանվորների և կոլտնտեսականների զավակները, ավարտելով տարրական դպրոցը, վոչ միայն իրավունք, այլև գործնական հնարավորություն ունեն ուսումը շարունակելու միջնակարգ, այնուհետև և բարձրագույն դպրոցում, վորտեղ ուսանողների վոչ միայն ուսուցման, այլև պահելու ծախսը լիովին վերցված է պետության հաշվին։ Մեր յերկրում ամեն մի յերիտասարդ կարող է ընդունվել ԲՈՒՀ, անկախ սոցիալական ծագումից։ Միջնակարգ դպրոցը «գերազանց» ավարտողները բարձրագույն ուսումնական հիմնարկներում ընդունվում են առանց կոնկուրսային քննությունների։

---

[1] Լենին, հ. XXIII, էջ 243։

Մեր ինտելիգենցիան կարիք չունի սարքովի «ժողովրդի մեջ գնալու», քանի որ նա ինքը ժողովրդի օրգանական մասն է հանդիսանում, ապրում է ժողովրդի շահերով և ձգտումներով: Մեր ուսանողը ժողովրդի մեջ չի գնում, այլ արձակուրդներին գնում է իր ծննդավայրը, իր հարազատ միջավայրը: 1937 թվի ամառը Խարկովի մարզի Նովոսեն-ժարսկու շրջանի Մալայա Պերեշչեպինա գյուղում հանդիպանում էին մոտ 50 ուսանողներ—այդ գյուղի կոլտնտեսականների տղաներն ու աղջիկները: Հենց միայն այդ փաստը միանգամայն բավական է հասկանալու համար, թե կուլտուրական ինչպիսի խոր փոփոխություններ են կատարվել մեր ժողովրդի կյանքում, որը իր միջից առաջ է քաշում իր ինտելիգենցիան:

Համարձակ կարելի է ասել, որ մեր ինտելիգենցիան գտնվում է բացառիկ յուրջանիկ պայմաններում: Ամենասերտ կապերով կապված լինելով ժողովրդի հետ, ինտելիգենցիան ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիզմի շինարարության, կոմունիզմի դաղափարները կյանքում կիրառելու գործին: Խորհրդային մասնագետը սոցիալիստական շինարարությանը մասնակցում է ոչ միայն որպես շարքային մարտիկ, այլև որպես կազմակերպիչ, ղեկավար: Խորհրդային ինտելիգենցիայի ստեղծագործական գործունեությունը յենթարկված չէ, ինչպես բուրժուական յերկրներում, կապիտալիստների շահամոլության: Մեզ մոտ, Խորհրդային յերկրում, նա ամբողջապես ծառայում է ժողովրդի շահերին: Մեր ինտելիգենցիան չունի գործազրկություն, մեզ մոտ չկա ինտելիգենտային աշխատանքի մարդկանց ավելցուկ, ինչպես այդ գոյություն ունի կապիտալիստական բոլոր յերկրներում: Ընդհակառակը, մեր պետությունը ձգտում է բոլոր բանվորներին հասցնել ինժեներատեխնիկական աշխատողների մակարդակին:

Այդպես է ինտելիգենցիայի—գիտության, տեխնիկայի և գեղարվեստի մարդկանց դրությունը: Մի խիստ խորհրդային իշխանության որով ինտելիգենցիան հնարավորություն

ասացավ լիավին զարգացնելու իր ընդունակությունները և անաահմանորեն ծառայելու ժողովրդին։

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՑԵՐԿԻՐ Է

Ռուսական կայսրությունը տարածված էր բազմաթիվ ազգություններից բաղկացած՝ բազմամիլիոն աղգաբնակություն ունեցող հսկայական տերիտորիայի վրա։ Հարյուրավոր տարիների ընթացքում ցարիզմն անընդհատ իրեն էր միացնում մերձակա հողերը, նվաճված ժողովուրդներին հպատակեցնելով իր տիրապետությանը։ Այս ժողովուրդների նվաճումը դաժան բնույթ էր կրում։ Գյուղացիական լավագույն հողերն առաջին հերթին հափշտակում էին ցարական սատրապները, իսկ նրանց հետևից գալիս էին ռուս կապիտալիստները, մանր փերեզակները, վերագնորդները, ամեն տեսակի շահագործողները, որոնց առաջին միտքն էր՝ կողոպտել գաղութները։

Ահա ռուսական կոլոնիզատորների «գործունեության» բազմաթիվ պատկերներից մեկը։

Ցարական մինիստր Կուրոպատկինը 1904 թվին Հեռավոր Արևելք գնալու ժամանակ բուրյատ-մոնղոլների պատվիրակությունը դանդատ ներկայացրեց նրան տեղական իշխանությունների կամայականության դեմ։ Ի պատասխան այդ դանդատի, Կուրոպատկինը պատվիրակությանը հայտարարեց հետևյալը. «Նկատի ունեցեք, որ յեթե ձեր ժողովուրդն իրեն վատ պահի, պատասխանատու դուք եք, իսկ յեթե, ասված մի արտաց, ձեր ժողովուրդը հանկարծ մտածի որևե ազատ վարմունք թույլ տալ իրեն, հակառակել թագավորի հրամաններին, դիտցեք, որ դուք բոպեապես կջնջվեք յերկրի յերեսից։ Ձեր հետքն անգամ չի մնա։ Ահա տեսեք, այստեղ ինչքան ռուսական զորք կա, իսկ բերել տալ կարելի յե հարյուր հազարներ, և դուք մի ակընթարթում կճզմվեք ու կվոչնչանաք։ Դուք վոչինչ չպետք և պահանջեք։ Դուք կարող եք վողորմություն խնդրել միայն»։

Ցարիզմը դաժանորեն ճնշում էր ռուս ժողովրդին, ավե-

լի մեծ դաժանությամբ հարձակվում էր նա վոչ-ռուս բնակչության աշխատավորների վրա: Իզուր չէր, վոր ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էին անվանում: Ցարիզմը համաձայնության մեջ էր մտնում կեղեքված ժողովուրդների տիրող դասակարգի՝ եմիրների, խանների, բեկերի, տեղական խոշոր կապիտալիստների հետ, մոտեցնում էր այդ վերնախավը ցարական գահին և ամբողջ ծանրությամբ, ռուս և տեղական աղգային բուրժուազիայի ու կրոնական պաշտամունքի սպասավորների դրամական պարկերի ուժով ճնշում էր ազգային դյուղացիությանը: Խավարն ու տգիտությունը զաղախների, թուրքմենների, ուզբեկների, թուրքերի, չուվաշների և մյուս ժողովուրդների մշտական ուղեկիցներն էին: Իրավազրկությունը, անհույս աղքատությունը, նորանոր բռնությունների մշտական սպառնալիքը, աղգությունների միջև կեղեքիչների կողմից արհեստական կերպով հրահրված յերկպառակությունները, պաշտամունքի սպասավորների բացարձակ հեղինակությունը—աղգային փոքրամասնությունների կյանքը դարձրել էին իրոք արցունքի հովիտ:

Հասկանալի յե, աղգային փոքրամասնությունների մեջ այս ամենն առաջացնում էր սարսափելի ատելություն դեպի ցարիզմը, դեպի նրա չինովնիկները, իսկ նրանց պատճառով և դեպի ամբողջ ռուս ժողովուրդը: Թվում էր, վոր յերբեք չի դա այնպիսի ժամանակ, յերբ այդ ժողովուրդները յեղբայրական սերտ կապերով կապվեն ու ապրեն ռուս ժողովրդի հետ: Իսկ ցարական կառավարությունը, ռուս և վոչ-ռուս կալվածատերերն ու կապիտալիստները, վաճառականներն ու առևտրականները, դեներալները, չինովնիկներն ու տերտերներն ամեն ինչ անում էին, վորպեսզի հրահրեն ինչպես ատելություն դեպի ռուսականը, նույնպես ատելություն և անբարյացակամություն բոլոր աղգությունների միջև: Բոլորին հայտնի յե այն մշտական թշնամությունը թուրք և հայ աղգաբնակությունների միջև, վորը պատճառ էր դառնում ջարդերի և տասնյակ-հազարավոր մարդկանց բնաջնջման:

Ցարիզմն ու տիրող դասակարգերը ժողովուրդների մի-

ջև թշնամություն հրահրելով, նրանց միմյանցից խորթացնելով աշխատում էին ամրացնել իրենց հիմքերը։

Ճնշված փոքրամասնությունների շարքերում վաղուց է վեր հասունանում էին տենչեր և հույսեր իրենց ազատության համար։ Ինչ չէին բողոքները, ապստամբությունները ներքին և արտաքին. վրացական, ուկրաինական, հրեական, հայկական, բելոռուսական, բուրյատ-մոնղոլական, յակուտական և Ռուսաստանի այլ ժողովուրդների հեղափոխական շատ մարտիկներ իրենց կյանքը զոհեցին ազատ և երջանիկ կյանքի համար մղած պայքարում։ Բայց ազգային ծայրերկրների ժողովրդական մասսաների բոլոր ապստամբությունները, բողոքները դաժանորեն ճնշվում էին ցարական սատրապների կողմից։

«Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենցից թոթափեցին ցարիզմի դահիճների և կապիտալի ճնշումը շնորհիվ այն բանի, որ հասկացան իրենց ազատագրական խնդիրը և Ռուսաստանի մյուս ազգությունների աշխատավորների հետ միասին ստեղծեցին ամուր յեղբայրական դաշինք խորհրդային իշխանություն հաստատելու, սոցիալիզմ կառուցելու համար մղվող պայքարում»[1]։

Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը ջարդեց ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ուժերը կաշկանդող կապանքները։ Աշխատավորները կերտեցին իրենց սոցիալիստական բազմազգ պետությունը—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, վոչ թե ժողովուրդների ճնշման և բռնության, այլ հոժարակամ միավորման ուղիով։

Խորհրդային իշխանության գոյության քսանամյակին մենք ունենք Խորհրդային Միության տարածքորեն բոլոր ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի ծաղկումը։ Չե՞ վոր դեռևս վոչ-հեռու անցյալում Միջին Ասիայի, Անդրկովկասի, Դաղստանի, Չեչենո-Ինգուշեթիայի և մյուսների չքավոր գյուղացիությունն իր հողը մշակում եր անհիշելի ժամանակներից պահպանված պրիմիտիվ դործիքնե-

---

1 Մոլոտով, Հոդվածներ և ճառեր, եջ 223, Հայկուսհրատ, 1937 թ.։

ռով։ Մարդկային ուժերի ամբողջ լարվածության և հսկայական կորստի առկայության պայմաններում այդ պրիմիտիվ մշակումը չնչին արդյունք էր տալիս, վորի յերեք քառորդը խլում եյին շորթիչները։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Միության ժողովուրդներին արթնացրեց դեպի բացառիկ ստեղծագործություն։ Թվում է, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության հաղթանակի հետ միասին դարերի ընթացքում կաշկանդված ժողովրդական յեռանդը ահռելի ուժով դուրս պոռթկաց։ Հարյուրավոր գրքեր կարելի յեր գրել ամեն մի ժողովրդի ստեղծագործության մասին։

Նայենք անցյալի գյուղատնտեսության վրա, այն դաշտերին և այն անտառները մշակմանը, յերբ մարդը կարծես անտեսանելի շղթաներով կապված էր իր անշնորհակալ դաշտերին։ Այժմ այդ դաշտերը և նրանց վրա աշխատողները բոլորովին կերպարանափոխվել են։ Բամբակի և հացահատիկային դաշտերում լսվում է տրակտորների ռիթմական հոնդոցը· աշխատանքի ամենապրիմիտիվ գործիքը՝ ամաչը կարելի յե տեսնել, թերևս, միայն թանգարաններում։ Կավի յեղրադրվածներով շրջապատված և տարերային անկարգապահությամբ դասավորված հողամասերը չեյին ուրախացնում ժողովրդի աչքը, իսկ այժմ ճիշտ պլանավորված, իրենց մեծությամբ գյուղատնտեսական պահանջներին համապատասխանող—նրանք անչափ գեղեցիկ տեսարան են ներկայացնում։ Բայց ամեն բանից գեղեցիկը—այդ դաշտերում աշխատող ժողովուրդն է։ Դեմքերի ուրախությունը, շարժումների վստահությունը, ինտելիգենտությունը, յերիտասարդությունը վոչ միայն տարիքի, այլև ժողովրդի գիտակցության մեջ—ահա նկարչի վրձինին արժանի տեսարան։

Այն ծանր հողը, վորը ժողովուրդների շատ սերունդների մշտական չարչարողն է յեղել, այժմ դարձել է ուրախության աղբյուր, յերջանկության աղբյուր, նրա կոլտնտեսական աշխատավորների հրաշալի կյանքի աղբյուր։ Առանց մեծ թվերով ծանրաբեռնելու, յես կասեմ միայն, վոր հումք-բամբակի արտադրությունը 1913 թվին կազմում էր

7,4 միլիոն ցենտներ, իսկ 1936 թվին՝ մոտ 24 միլիոն ցենտներ: Առանձին կոլտնտեսությունները, վորտեղ ստեղծագործական ենտուզիազմը զուգորդվում է բարձր տեխնիկայի և գյուղատնտեսական վարձատրության հետ, ձեռք են բերում վոչ միայն առաջ չտեսնված հաջողություններ, այլև այնպիսի հաջողություններ, վորոնց վրա մենք ել ենք զարմանում: Մի մտածեցե՛ք՝ մեկ հեկտարից ստանալ 100 ցենտներ բամբակ: Մեկ հեկտարի բամբակի ճյուղերի վրա դտնվում է 600 փութ հումք-բամբակ: Մի՞թե այս ապացույց չէ այն բանի, վոր յերբեմնի ճնշված ժողովուրդը վերջապես ձեռք է բերել իր յերջանկությունը:

Բոլոր հանրապետություններում, բոլոր ազգային մարզերում զարգացել և արդյունաբերությունը, կառուցվում են ֆաբրիկաներ և գործարաններ, վորտեղ ռուս ինժեներների, տեխնիկների և վարձատու բանվորների ոգնությամբ աճեցվում են բանվորների ու տեխնիկական ինտելիգենցիայի ազգային կադրեր: Առանձնապես ուրախալի յե նշել, վոր այդ ֆաբրիկաների և գործարանների դազդյահների մոտ կանգնում են ազգությունների հազարավոր կանայք, վորոնք միայն քսան տարի սրանից առաջ բառացիորեն դեռևս սարկուհիներ եյին՝ թե՛ վորպես աշխատավորուհի և թե՛ վորպես կին:

Մեծ ու բազմակողմանի յե ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունը: Գիտության մեջ, տեխնիկայի, գեղարվեստի ասպարեզում՝ ամենուրեք նկատվում է ձեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց բարգավաճում: ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունն առավելապես փայլուն կերպով յերևաց ժողովրդական յերգի մեջ, հսկայական քանակությամբ յերգեցիկ խմբերի, նվագախմբերի, ինքնագործ թատրոնական խմբակների կազմակերպման մեջ: Համարյա բոլոր ազգային հանրապետությունները ունեն իրենց պետական թատրոնները: Ցեսս մանրամասն չեմ խոսի Ուկրաինայի մասին: Նրա կուլտուրան անցել և մոտավորապես նույնպիսի ուղի, ինչպես և ռուս ժողովրդի կուլտուրան: Ուկրաինական ժողովուրդը շատ բան է կրել, ռուս ժողովրդի հետ

միասին նա պայքարել է ինքնակալության դեմ, ռուս ժողովրդի հետ պարտություններ է կրել, հաղթություններ է տարել:

Նույնը պետք է ասել և վրաց ժողովրդի մասին, վորը ռուս ժողովրդի հետ ուս-ուսի տված պայքարել է ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ: Վրաց պրոլետարիատը պատվավոր տեղ է գրավում ռուսական հեղափոխական բանվորական շարժման մեջ: Վրացական կուլտուրան գտնվում է Եվրոպայի առաջավոր յերկրների կուլտուրայի մակարդակի վրա: Խորհրդային իրավակարգը նոր, սոցիալիստական բովանդակությամբ հարստացրեց այդ կուլտուրան և հանեց այն ե'լ ավելի մեծ բարձունքների վրա:

Ղազախստանի, Ուզբեկստանի, Հայաստանի և մյուսների յերգերում, ազգային թատրոնների բեմադրություններում, յերաժշտության, ժողովրդական ստեղծագործության մեջ ժողովուրդները, ասես, խավարչտին բանտից դուրս պրծնելով դեպի ազատ յերկրի պայծառ արևի ճառագայթները, մեծ թափով յերևան են բերում իրենց տաղանդները, գովերգելով ազատ կյանքի բերկրանքը:

Մենք գտնում ենք, վոր Խորհրդային Միության սահմաններից դուրս, նույնիսկ ամենաառաջավոր մարդիկ, չեն գնահատել այդ մեծագույն պրոցեսի—ժողովուրդների յեղբայրության ստեղծման ամբողջ խորությունը: Իսկ չե՞ վոր այդ կատարվում է աշխարհում առաջին անգամ: Պատմության մեջ մենք չգիտենք և վոչ մի պետություն, վորտեղ այնպես, ինչպես Խորհրդային Միությունում, ազգությունների միջև գարգացած լինի յեղբայրությունն ու բարեկամությունը: Ցեվ գարմանալի բան է՝ սրանից քսան տարի առաջ անվստահությամբ եյին վերաբերվում դեպի այն ամենը, ինչ վոր ռուսական եր, իսկ այժմ Խորհրդային Միության ազգություններն ազատորեն ոգտագործում են ռուս ընկերների փորձը, ռուսական արվեստը, գիտությունը և տեխնիկան:

Հակառակ ֆաշիզմի, վորն ազգամիջյան ատելություն է հրահրում, Խորհրդային Միության ազգությունների միջև մրցություն է տեղի ունենում: Ամեն մի ազգություն

ձգտում է առաջին տեղը գրավել՝ բերքատվության, աշխատանքի արտադրողականության, ֆաբրիկաներում և գործարաններում կատարվող աշխատանքի եֆեկտիվության ասպարեզում: Ամեն մի ազգային թատրոն ուզում է առաջ քաշվել, առաջին տեղը գրավել և ցույց տալ իր առավելությունները ուրիշ թատրոնների հանդեպ: Սպորտի ազգային խմբերն ուզում են առաջինը լինել ֆուտբոլի, տենիսի և այլ ասպարեզներում: Սակայն այս վոչ մի առնչություն չունի բուրժուական կոնկուրենցիայի հետ: Այս մրցումը վոչ թե խորթացնում է, այլ հարազատացնում է, վոչ թե անջատում է, այլ միացնում է, վոչ թե քանդում է, այլ ցեմենտապատում է Խորհրդային Միության ժողովուրդներին: Ամեն մի ժողովուրդ ուզում է ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության մեջ պատվավոր տեղ գրավել: Ուզբեկստանի ամեն մի բանվոր կամ գյուղացի կասի, վոր ինքը վոչ միայն Ուզբեկստանի քաղաքացի է, այլ ամենամեծ հրճվանքով ասում է, վոր ինքը քաղաքացի է Խորհրդային Միության, վորի մայրաքաղաքն է Մոսկվան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԲԸ

Նյութական միջոցների և կուլտուրայի զարգացումն ազգային փոքրամասնությունների մեջ տեղի չի ունենում վոչ անջատ ձևով—դա կատարվում է ամբողջ Միության ժողովուրդների, և առաջին հերթին ռուս ժողովրդի մեջ:

Մարդկանց գիտակցությունից ավելի ու ավելի հեռանում, ավանդությունների գիրկն է անցնում հին աշխարհն իր նախապաշարմունքներով, իր հետամնաց տեխնիկայով, անհատական աշխատանքով: Նոր, հասարակական, կազմակերպված աշխատանքում, վորտեղ լայնորեն կիրառվում է նոր տեխնիկան, աճում է նոր կուլտուրան, աճում են նոր մարդիկ, խորհրդային մարդիկ, գիտակից կառուցողներ: Կարելի է համարձակորեն ասել, վոր Խորհրդային Միության բնակչության հիմնական գործոն մասն իր ճնշող մեծամասնությամբ բաղկացած է խորհրդային նոր մարդկանցից: Այս հաստատվում է պարզ դատողությամբ. 20 տարի

գոյություն ունի խորհրդային իրավակարգը, և այն մարդիկ, վորոնք խորհրդային իրավակարգի սկզբին 15 տարեկան էին, ներկա մոմենտին 35 տարեկան են դարձել:

Անցած տարիները ինքնին նշանակալից տարիներ են: Այդ տարիները հսկայական լարվածություն էին պահանջում մարդկանցից: Բավական է հիշել Խորհրդային պետության թեկուզ կարճ, բայց խորը բովանդակությամբ լի և գունեղ պատմությունը: Խորհրդային նկարիչներն անտարակույս կստեղծեն այս դարաշրջանին արժանի գործեր:

Մեր ստեղծագործության վերելքն այնպիսի առանձնահատկություններ ունի, վորոնց նմանը չկա վոչ մի ուրիշ երկրում: Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մոտ համարյա ամեն մի գործարանում, ամեն մի կոլտնտեսության և խորհտնտեսության մեջ, ամեն մի հիմնարկության մեջ և բնակավարձկոոպների զգալի մասում կան պատի թերթեր, ինքնակրթության, քաղաքագիտություն ուսումնասիրելու խմբակներ, դեղարվեստի ինքնագործ խմբակներ, գրականության խմբակներ և այլն: Այդ աշխատանքի մեջ ներգրավված են տասնյակ-միլիոնավոր մարդիկ: Միմիայն այդ փաստերն արդեն վկայում են խորհրդային ժողովրդի կուլտուրականության աճման մասին, վորովհետև խոսքը տասնյակ-միլիոնավոր մարդկանց կուլտուրայի աճման մասին է:

Մի՞թե խորհրդային ժողովրդի կուլտուրայի չտեսնված աճման ցուցանիշը չի հանդիսանում մեր երկրում ստախանովյան շարժման զարգացումը, վորի մեջ գրված է բանվորների ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի կորիզը:

Մի՞թե Ստախանովի, Բուսիգինի, Սմետանինի, Դուսյա և Մարուսյա Վինոգրադովաների, Կրիվոնոսի, Դյուկանովի, Ցուսիմի, Մազայի—մեր ժողովրդական տնտեսության այդ նորարարների—անունները չեն վկայում խորհրդային ժողովրդի կուլտուրայի, քաղաքական գիտակցության աճման մասին: Այս վկայում է այն մասին, վոր „անվոր դասակարգի շերտերում ստեղծվում և հոյակապ արտադրողների ավանգարդ—մարդիկ, վորոնք «կատարելապես տիրապետել են ի-

ինչ գործի տեխնիկային և գիտեն տեխնիկայից քամել այն առավելագույնը, վոր կարելի յե քամել նրանից»[1]:

Ստախանովյան շարժումը դրավեց և կոլտնտեսային դյուղացիությանը: Ո՞ւմ հայտնի չեն դաշտերի պանծալի ստախանովականները՝ Մարիա Դեմչենկոյի, Պաշա Անգելինայի, Մարինա Գնատենկոյի, Պոլագուտինի, Ռակինի, Դարյա Մելնիկի, Մամլյաքատ Նախանգուլայի, Պաշա Կովարդակի անունները: Կոլտնտեսականների մեջ մրցումը աճում է խորն ու լայնորեն: Խորհրդային դյուղի առաջավոր մարդիկ պայքարում են կոլտնտեսական դաշտերի բարձր բերքատվությունն ապահովելու համար, և մենք դյուղատնտեսության մեջ ունենք աշխատանքի բարձր արտադրողականության հիանալի որինակներ, վորոնք բոլորովին անհնարին եյին անցյալում: Ջնջվում է քաղաքի և դյուղի միջև յեղած հին դարավոր հակադրությունը: Կոլտնտեսային արտադրությունը, դյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, քաղաքական-լուսավորական լայն միջոցառումները դյուղում պայմաններ են ստեղծում լիովին վոչնչացնելու այդ հակադրությունը:

Հաճախ դանդատներ ենք լսում, վոր մեր գրականությունը թույլ է: Գուցե մեր գրականությունը թույլ է համեմատած այն հսկայական աճի հետ, վորը նկատվում է մարդկային գործունեության մնացած բոլոր վոլորտներում: Բայց «մեր գրականությունը հանդիսանում է՝ բոլոր ժողովուրդների և յերկրների գրականություններից ամենայերիտասարդը: Միևնույն ժամանակ նա հանդիսանում է ամենադաղափարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական գրականությունը»[2]: Այս գրականությունը խոսում է Խորհուրդների յերկրի ժողովուրդների սոցիալիստական աշխատանքի մասին, Խորհրդային Միության յերջանիկ կյանքի մասին: Նա ծառայում է սոցիալիստական շինարարության

---

1 Ի. Վ. Ստալին, Ճառ՝ արտասանած ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությանը, եջ 11, Հայկուսհրատ, 1935 թ.:

2 Ժդանով, Խորհրդային գրականությունը ամենադաղափարական և ամենաառաջավոր գրականությունն է աշխարհում, եջ 8, 1934 թ.:

գործին։ Մեր գրական յերկերի հերոսները—դրանք նոր կյանքի ակտիվ շինարարներն են՝ բանվորները, բանվորուհիները, կոլտնտեսականները, կուսակցականները, ինժեներները, կոմյերիտականները, պիոներները, տնտեսավարները, մեր յերկերի թեմատիկան—այդ մեր յերկրի ժողովուրդների ստեղծագործ գործունեությունն է։

Մի՞թե այս բոլորը չի վկայում այն մասին, որ ԽՍՀՄ դարձել է վոչ միայն առաջավոր արդյունաբերական յերկիր, վոչ միայն աշխարհում ամենախոշոր սոցիալիստական գյուղատնտեսության յերկիր, այլև առաջավոր սոցիալիստական կուլտուրայի յերկիր։

Բոլորին հայտնի յե, թե ինչպիսի հաջողություն ունեն միջազգային կոնգրեսներում և կոնկուրսներում մեր գիտնականները, դաշնակահարները, ջութակահարները, արտիստները, յերգիչները, պարողները, վազողները, լուղորդները, շախմատիստները։

Բարձրագույն արտահայտությունն այն բանի, որ մեր կադրերը հաղթահարել են տեխնիկան, որ մեր յերկիրն ամեն որ ստեղծում է նորանոր խոշոր կազմակերպիչներ, մարտիկներ, ենտուզիաստներ, հերոսներ, հանդիսանում են Խորհրդային Միության հպարտ բազեների՝ Չկալովի, Բայդուկովի, Բելյակովի, Գրոմովի, Դանիլինի, Ցումաշևի հերոսական թռիչքները։

Իրավունք ունեն մեզ հարցնելու և կհարցնեն՝ ինչո՞վ բացատրել աշխատանքի արտադրողականության այսպիսի չտեսնված աճը, խորհրդային ժողովրդի կուլտուրայի աճը, ստեղծագործության ծաղկումը մեր յերկրում։ Մենք կպատասխանենք ընկեր Ստալինի բառերով՝ «Կյանքը ավելի լավ է դարձել, ընկերներ։ Կյանքն ավելի ուրախ է դարձել։ Իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքը հաջող է գնում։ Դրանից ել առաջանում են արտադրական բարձր նորմաները։ Այստեղից ել առաջ են գալիս աշխատանքի հերոսներն ու հերոսուհիները»[1]։

---

1 Ի. Վ. Ստալին, ճառ՝ արտասանած ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությանը, էջ 15, Հայկուսհրատ, 1937 թ.։

ԽՍՀՄ ՀԶՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ Է

Մեծ է ու զեղեցիկ մեր հայրենիքը—աշխատավորների հարազատ մայրը դարձած միակ յերկիրն աշխարհում: Ասես թե պատմությունը հատուցեց նրանց հազարամյա աշխատանքները, նրանց կրած դժբախտությունները և տանջանքները ամբողջ անցյալի համար:

Մեր յերկիրը տարածված է ակած Սառուցյալ ովկիանոսից՝ նրա կղզիներով և սառցակույտերով հանդերձ, վորտեղ բնության հետ պայքարում են խորհրդային հերոսները, մինչև բարեբեր հարավի—Սև ծովի ափերը, ակած լեհական և լատվիական սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը:

Տերիտորիայի լայնածավալությունը նախորոշել է նաև մեր հողում յեղած հարստությունների բազմազանությունը: Հյուսիսը ծածկված է անտառներով, վորոնց վորակը հայտնի յե ամբողջ աշխարհին: Հյուսիսից դեպի հարավ և արևմուտքից դեպի արևելք, բոլոր ուղղություններով ձգվում են հաճարի և ցորենի անծայրածիր դաշտերը, վորոնք կարող են կերակրել հարյուր-միլիոնավոր մարդկանց: Այդ դաշտերին միանում են մարդու ձեռքով մշակած ձյունանման բամբակի հարթավայրերը, թեյի պլանտացիաները, խաղողի այգիները և կոլտնտեսային հրաշալի պարտեզներում հասնում են մանդարին, նարինջ, կիտրոն—խորհրդային իշխանության որով մշակված պտուղներ:

Մեր գետերը, լճերը և մեր յերկիրը շրջապատող ծովերը լեփ-լեցուն են ձկների հսկայական պաշարով: Լայնածավալ դաշտերում և մարգագետիններում արածում են խոշոր և մանր յեղջյուրավոր անասունների հոտեր: Մեր յերկրի ընդերքը հարուստ է յերկաթի հանքերով, քարածխով, նավթով, վոսկով, հանքային պարարտանյութերով և անսահման քանակությամբ այլ ոգտակար հանքերով:

Տասնյակ-հազարավոր կիլոմետրերի վրա ձգվում են յերկաթուղիների պողպատե ռելսերը:

Մեր ծովերին ու ջրատար գետերին խորհրդային մարդիկ միացրին ջրանցքներ, վորոնց վրայով հարավից դեպի հյուսիս, արևմուտքից դեպի արևելք և դեպի հետ ուղևոր-

վում են անհամար բեռներ—մարդու արտադրողական աշխատանքի արդյունքը:

Անտառները, ընդերքի հարստությունները, բանվորների և կոլտնտեսականների արտադրողական աշխատանքը, տեխնիկային տիրապետելը հնարավորություն տվին լայնորեն ծավալելու յերկրում ինդուստրիալ շինարարությունը: Ստեղծվել են հաղարավոր ֆաբրիկաներ և գործարաններ, ելեկտրոկայաններ: Մեր գետերը, ինչպիսիք են Դնեպրը, Վոլգան, վորոնք անցյալում ոգնում եյին միայն բեռների փոխադրմանը, այժմ տալիս են ահագին քանակությամբ ելեկտրական եներգիա: Ստեղծված են աշխատանքի նոր ճյուղեր, վորոնք հին ցարական Ռուսաստանի ուժերից վեր եյին: Վերստեղծված է մետաղագործական արդյունաբերությունը, վորը անհամեմատելի յենթակինի հետ. կառուցված են ավտոմոբիլային և տրակտորային գործարաններ. ստեղծված է ավիացիոն արդյունաբերություն. արտադրվում է սինթետիկ կաուչուկ, ստեղծված է քիմիական արդյունաբերություն, վորը տարեցտարի բարձրացնում է կոլտնտեսային դաշտերի համար անհրաժեշտ քիմիական պարարտանյութերի արտադրությունը: Այս ամենը, հին ցարական, ագրարապես ագրքաս Ռուսաստանը, վորտեղ գերակշռում եր գյուղացիական պրիմիտիվ աշխատանքը, դարձրեց բարձր զարգացած ինդուստրիալ յերկիր, վորը կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Հին ցարական Ռուսաստանը մտնում եր մեծ տերությունների կազմի մեջ: Այդ նրան չեր խանգարում նրանց հարկատուն լինելու: Սակայն, Ռուսաստանից ահագին շահույթներ ստացող յերկրներն ել պարտքի տակ չեյին մնում: Ցարիզմի և ռուս տիրող դասակարգի համար ծանր բոպեներին այդ յերկրները նրանց ոգնության եյին գալիս իրենց դրամական պարկով: Այդպես յեղավ 1905 թվին, յերբ թվում եր՝ ահա վորտեղ վոր և հեղափոխական բանվոր դասակարգը և գյուղացիությունը մահացու հարված կհասցնեն ցարիզմին: Այդ ժամանակ ֆրանսական բանկիրները փրկություն հասան իրենց «կլիենտուրային»:

Կապիտալիստական աշխարհի պարագլուխները մեզ,

Խորհրդային Միությանը, չեն սիրում, իսկ յեթե խղճով ասենք, ատում են չար ատելությամբ։ Ասենք՝ ատելու պատճառներ կան։ Առաջինը, մենք զրկեցինք նրանց մեր բանվորներին շահագործելու, մեր հողի ընդերքն ոգտագործելու հնարավորությունից. յերկրորդը, և այդ գլխավորն է, մենք տապալեցինք մեր կապիտալիստներին։ Մեզ մոտ իշխանության գլուխ են կանգնած բանվոր դասակարգն ու գյուղացիությունը—սրանով իսկ մենք աշխարհի բոլոր աշխատավորներին որինակ ցույց տվինք, վոր աշխատավորները կարող են յոլա գնալ առանց կապիտալիստների։ Ահա այս բանը կապիտալիստները վոչ մի կերպ ներել չեն կարողանում։ Սրանումն է հենց նրանց ատելության հիմքը և միևնույն ժամանակ նրանց անասնական սարսափը Խորհրդային Միության հանդեպ։

Ավազակային ֆինանսական կապիտալի գինակիցները—ֆաշիստները, մոլեգնորեն տարված են մի մտքով—կործանել Խորհրդային Միությունը։ Նրանց հրապուրում են մեր յերկրի հսկայական տարածությունները, նրա մշակված դաշտերը, նորակառույց հիանալի ֆաբրիկաներն ու գործարանները. նրանց գրավում են մեր ընդերքի հարստություններն ու մեր անտառները. նրանց գրավում են մեր աշխատավորների արտադրողական աշխատանքով ստեղծված հարստությունները։ Սոված շնագայլերի նման չրջում են այդ դիշատիչները մեր սահմանների յերկայնությամբ, ձգտելով մի սողանցք գտնել մեր տերիտորիան մտնելու համար։ Բայց ամուր են մեր սահմանները։ Նրանք պահպանվում են մեր փառապանծ Կարմիր Բանակի մարտիկների կողմից։ Այս կամ այն տեղում պատահմամբ մեր սահմանն անցած այդ դիշատիչների առանձին փորձերը նրանց համար վողբալի վախճան ելին ունենում։ Մեր մարտիկները անողոքաբար հաշիվ ելին տեսնում։

Մեր բանակը, ժողովրդական բանակը, աշխարհորեն պահպանում է Խորհրդային յերկիրը, նրա խաղաղ սոցիալիստական աշխատանքը։ Ցեվ ուրիշ կերպ չեր ել կարող լինել։ Չե՞ վոր մեր բանակը—այդ՝ կոլտնտեսային գյուղացիության, բանվոր դասակարգի և ԽՍՀՄ բոլոր ազգերի քա-

դաբացիների լավագույն զավակներն են։ Աշխարհում և վոչ մի տեղ չկա այսպիսի կապ—հարազատություն ժողովրդի և բանակի միջև։ Մեր Կարմիր Բանակը—դա ժողովրդի լավագույն մասն է։ Նա ժողովրդի հետ միասին հաղթահարում է ճանապարհին հանդիպող խոչընդոտները, նա ժողովրդի հետ միասին հաղթահարում է բնության ուժերը, նա ժողովրդի հետ միասին նվաճում է կուլտուրա, լավագույն ապագա։ Նա ժողովրդի հետ միասին, վորպես նրա անկապտելի մասը, անձնվիրաբար պաշտպանում է և կպաշտպանի Խորհրդային Միության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, մեր յերկրում բնակվող բոլոր ժողովուրդների յերջանկությունը։

Մեր հայրենիքը սքանչելի յե։ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները անսահմանորեն սիրում են նրան և չեն կարող չսիրել։ Չե՞ վոր նա յերկրագնդի միակ մասն է, վորտեղ աշխատավորական մասսաները, բանվոր դասակարգը, գյուղացիությունն իրենց յերջանկության տերերն են հանդիսանում. չե՞ վոր նա միակ յերկիրն է, վորտեղ իշխանության գլուխ են կանգնած բանվորներն ու գյուղացիները։ Կապիտալիստական յերկրներում պրոլետարիատը հայրենիք չունի։ Այնտեղ կապիտալիստների հայրենիքն է։ Խորհրդային Միությունը—դա աշխատավորների հայրենիքն է։ Միլիոնավոր մարդիկ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության որից խլեր գտել են իրենց իսկական հայրենիքը, իրենց կրծքով են նրան պաշտպանել և պաշտպանում են թշնամիների դեմ մղվող կռվում։ Ի՞նչպես չսիրենք մենք նրան, ի՞նչպես չկռվենք մենք նրա համար։

Խորհրդային մարդկանց հայրենասիրությունն արտահայտվում է սիրով ու համերաշխ մշակված դաշտերով, հոյակապ կառուցված ֆաբրիկաներով և գործարաններով, յերկրի հասարակական կյանքին լայն մասսաների ցույց տված ակտիվ մասնակցությամբ, իրենց կուլտուրականությունը բարձրացնելու ձգտումով։ Այս հայրենասիրությունը յերևան և դալիս ամեն մի կարմիր բանակայինի դիտակցության մեջ։ Չե՞ վոր նրա պահպանության տակ մեր հայրենիքը անմատչելի յե Խորհրդային Միության բոլոր թշնամիների համար։ Դրա

համար եւ ժողովուրդը, փոքրից մինչև մեծը, սրտառուչ հոգատարություն և սեր է ցուցաբերում դեպի իր Կարմիր Բանակը:

Բանվոր դասակարգը և գյուղացիությունը իշխանությունը վերցրին հոշոտված յերկրում, վորտեղ դերակշռում եր ավերված գյուղացիությունը, քանդված ֆաբրիկաներն ու գործարանները: Յերկիրը լեցուն եր ժողովրդի թշնամիներով, վորոնք պատրաստ եյին մի արծաթով վաճառելու իրենց հայրենիքը: Արևելքից և Արևմուտքից դալիս եյին նրա վրա ոտարերկրյա զորքերը, վորոնք ծարավի եյին համեղ պատառը պոկելուն:

Քսան տարվա ընթացքում ԽՍՀՄ ժողովուրդները շատ բան են արել: Նրա բոլոր անկյունները մաքրված են ինտերվենտներից, յերկիրը հսկայական չափով աճում և նյութապես և կուլտուրապես, վորով և ամրանում է նրա ռազմական հզորությունը: Խորհրդային Միության ձայնը միջազգային հարաբերությունների Վոլիմպոսում ավելի ու ավելի բարձր է հնչում: Այդ ձայնին ավելի ու ավելի ուշադիր ականջ են դնում վոչ միայն ԽՍՀՄ թշնամիներն, այլև բարեկամները—աշխատավոր մասսաները:

ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների մեծ յերկիրն է:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Է

Հարյուր-հազարավոր մարդիկ հարց են տալիս իրենց՝ վո՞րտեղից են վերցվում Խորհրդային Միության ժողովուրդների ներքին ուժերը: Ի՞նչն է նրանց հզոր աճման դրդապատճառը:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է, ամեն վոք կարող է այն գտնել. դա կոմունիստական կուսակցությունն է: Նրա ղեկավարության ներքո քառասուն տարուց ավելի պայքարում է մեր յերկրի բանվոր դասակարգը, նրա ղեկավարությամբ բանվորներն ու գյուղացիներն իշխանություն ձեռք բերին, նրա ղեկավարությամբ մենք մեր յերկրում հաղթեցինք ցարիզմին ու կապիտալիզմին և նրա ղեկավարությամբ մենք կառուցեցինք սոցիալիզմ: Այն ամենը, ինչ

վոր կատարվում է Խորհրդային Միության մեջ, դա կոմունիստական կուսակցության ծրագրի իրագործումն է: Կոմունիզմը վոգևորում և վարակում է մարդկանց մեծագույն պաթոսով, կոմունիզմը վոգեշնչում է ֆիզիկական հասարակ աշխատանքը, լցնելով այն խորը գաղափարական բովանդակությամբ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության լավագույն զավակները, աշխատավորների ամենաակտիվ մասը մտնում է կոմունիստական կուսակցության մեջ, մտնում է նրա համար, վորպեսզի պայքարի բանվոր դասակարգի և գյուղացիության գործի համար: Ցեմ ուրիշ կերպ չի էլ կարող լինել:

Կոմունիստական կուսակցությունը չունի իր սպեցիֆիկ շահերը, չունի իր հատուկ նպատակները: Նրա շահերը, նրա նպատակները—դա բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության շահերն ու նպատակներն են: Կոմունիստական կուսակցությունը ձևակերպում և վորոշում է այն նպատակները, վորոնց պետք է ձգտի ժողովուրդը, կազմակերպում և կենտրոնացնում է այն միջոցներն ու հնարավորությունները, վորոնցով կարելի չէ հասնել այդ նպատակների իրագործմանը, ղեկավարում է նշված խնդիրների կատարումը:

Կոմունիստական կուսակցությունը սերտորեն կապված է մասսաների հետ—և չի էլ կարող կապված չլինել նրանց հետ: Կոմունիստական կուսակցությունը ձգտում է դրված նպատակներն իրագործելու միայն մասսաների հետ միասին, արտահայտելով նրանց շահերը, կազմակերպելով նրանց, պարզաբանելով և ուղղելով նրանց հասնելու այդ նպատակներին: Մասսաների հետ կուսակցության սերտ կապի կորուստը կլիներ նաև նրա կոմունիստական բովանդակության կորուստ:

Աշխատավոր մասսաները և կոմունիստական կուսակցությունը—այդ մի ամբողջություն է: Իզուր չէ, վոր Լենինի հիշատակը վոչ միայն ապրում է, այլ ավելի ու ավելի տեղեր է գրավում մարդկանց գիտակցության մեջ: Իզուր չէ, վոր Ստալինի անունը միլիոնավոր մարդկանց սրտերում հիացմունք, ուրախության և մտերմության զգացմունք է

առաջ բերում։ Ստալինի հետ, վորպես կոմունիստական դաղափարների արտահայտչի, կապված է ռուսական սոցիալիստական մեծ հեղափոխության առաջընթաց շարժման ամբողջ պատմությունը, նրա հետ են կապված ակնկալությունները, հույսերը և Խորհրդային Միության ժողովրդական մասսաների արդեն ձեռք բերած հաջողությունները։ Վորպես արձագանգ այդ համաժողովրդական սիրո, հնչում են ընկեր Ստալինի խոսքերը՝ «Կարող եք չտարակուսել, ընկերներ, վոր յես պատրաստ եմ առաջնակարգ դերում դարձյալ, պրոլետարական հեղափոխության գործին և համաշխարհային կոմունիզմի գործին նվիրելու իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակությունները, և յեթե կարիք լինի, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»[1]։

Կոմունիստական կուսակցությունը ջահն է հանդիսանում պատմական այն ուղու, վորով ընթանում են ԽՍՀՄ ժողովուրդները։ Կոմունիստական կուսակցությունը ազնվացնում է, վարակում է ենտուզիազմով, առաջացնելով մասսայական հերոսություն և նրա դավակների մեջ բացառիկ սեր դեպի սոցիալիստական հայրենիքը։

Խորհրդային Միության ժողովուրդները կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ պայքարում եյին իրենց լավագույն ապագայի համար։ Կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ նրանք այժմ հաղթանակից հաղթանակ են դնում։ Ընկեր Ստալինի ղեկավարությամբ Խորհրդային Միության ժողովուրդները կնվաճեն կոմունիզմը։

Ցերը հայացք ես գցում անցած ուղու վրա, վորի սկիզբն եր Մեծ սոցիալիստական հեղափոխությունը, ակամա քեզ համակում է հիացմունքի, զարմանքի զգացմունք աշխատավոր մասսաների ստեղծագործական ուժերի հանդեպ, նրանց հերոսության հանդեպ, մեր կուսակցության իդեաների համար մղվող պայքարում նրանց ցուցաբերած անսահման

---

1 «Պրավդա», 22 դեկտեմբերի 1929 թ.։

նվիրվածության հանդեպ։ Այդ ստեղծագործական ուժերն ավելի փայլուն կերպով արտացոլված են Խորհուրդների VIII Համամիութենական Արտակարգ համագումարում ընդունված ԽՍՀՄ Սահմանադրության մեջ։ Ժողովուրդն այն անվանում է մեծ Ստալինյան սահմանադրություն։

Սահմանադրությունն իր հակիրճ ձևակերպումներում աշխատավոր մասսաների վրա յե հաստատել, իրավաբանորեն ամրացրել այն, ինչ վոր նրանք ձեռք են բերել ու նվաճել են։

Ստալինյան սահմանադրության ստեղծումն ու ընդունումը պատմական մեծ քայլ է դեպի առաջ ԽՍՀՄ ժողովուրդների զարգացման գործում, ժողովրդապետության զարգացման գործում։ Մինչդեռ կապիտալիզմի յերկրներում կործանվում են դեմոկրատիայի առանց այն էլ խղճուկ ձևերը, իսկ մի շարք յերկրներում դեմոկրատիան բոլորովին ճնշված է և փոխարինված է ֆաշիզմով, Խորհրդային Միությունը անց է կացնում ընտրական սիստեմի հետագա դեմոկրատիզացիան, ներգրավելով բանվորներին և գյուղացիներին պետական կառավարչության մեջ, ընդարձակելով բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան և դիկտատուրան վերածելով «հասարակության պետական դեկավարման ավելի ճկուն, հետևաբար՝ ավելի հզոր սիստեմի...»[1]։

Ամբողջ խորհրդային իշխանությունը վերից վար, սկսած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից մինչև գյուղական խորհուրդը, ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ։ Այդ նշանակում է—ժողովրդական վերահսկողության ուժեղացումը պետական որգանների աշխատանքի վերաբերմամբ։ Այդ նշանակում է, վոր իշխանության ամեն մի կրողին հետևելու յեն նրա հաղարավոր ընտրողները։ Այդ նշանակում է, վոր իշխանության այս կամ այն ներկայացուցչի չարարկությունների, սխալների և աշխատել չիմանալու համար ընտրողը չի կարող ներքուստ բարոյական իր

---

1 Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 38, Հայկուսհրատ, 1936 թ.։

պատասխանատվությունը չզրկել նրա համար: Այդ, իր հերթին, ժողովրդական մասսաների մեջ զարգացնում և ամրապնդում է պետականության գիտակցությունը, պատասխանատվություն Խորհրդային սոցիալիստական պետության առաջադիմության և ամրողջականության համար:

ԽՍՀՄ Սահմանադրությունը լայնորեն ծավալում է խորհրդային դեմոկրատիան: Նա չի սահմանափակում քաղաքացու իրավունքները հայտարարելով, այլ ապահովում է այն՝ որինական կարգով: «Ուստի հասկանալի է, վոր նոր Սահմանադրության նախագծի դեմոկրատիզմը հանդիսանում է վոչ «սովորական», «ընդհանուրի կողմից ճանաչված» դեմոկրատիզմ ընդհանրապես, այլ «սոցիալիստական դեմոկրատիզմ»[1]:

Սահմանադրությունը դեմոկրատականացնում է նաև խորհրդային դատարանը, վորն ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դաղտնի քվեարկությամբ: Խորհրդային իշխանությունը ժողովրդի ձեռքն է հանձնում պետական բացառիկ կարևորություն ունեցող մի ինստիտուտ, վորն աշխատավորների ճնշման գործիք է ծառայում կապիտալի բոլոր յերկրներում: Այսպիսի բան կարող է անել միայն ժողովրդական իշխանությունը: Այս փաստի մեջ պարզորեն արտացոլում է խորհրդային իրավակարգի ամրողջ սիստեմը:

Շատ ջանք և գործադրել ժողովուրդն իր հողը ոտարերկրյա ինտերվենտների ձեռքից խլելու համար, շատ արյուն և թափել ցարական վոհմակի դեմ մղած կռվում: Բանվորների, գյուղացիների և խորհրդային բոլոր ազնիվ քաղաքացիների կողմից մեծ ուժ և դրված Խորհրդային պետության կառուցման վրա, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման վրա, Խորհրդային Միության ժողովուրդների կուլտուրայի զարգացման վրա:

Վորպես արդյունք հերոսաբար անցած այս ուղու՝ ժողովուրդն ունի «պատմական վաստակ», վորը պարզ ու

---

1 Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 23, Հայկուսհրատ, 1936 թ.:

սեղմ, համարյա արձանագրական վոճով, խոսում է ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթության մասին, կապիտալիստական տերությունից ԽՍՀՄ աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ մեջ ծավալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթության փաստերի մասին...

Վերջապես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի է ունենալ իր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում է մեր հաղթությունների պտուղների մասին: Հաճելի և բերկրալի է գիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթությունը: Հաճելի և բերկրալի է գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր այդ իր արդյունքներն է տվել: Դա հոգեպես զինում է մեր բանվոր դասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ է շարժում և բարձրացնում է որինական հպարտության զգացմունքը: Դա ամրապնդում և հավատը դնելի մեր ուժերը և մոբիլիզացիայի է յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար»[1]):

Սհա թե ինչու համար աշխատավոր մասսաներին մոտ է, թանդ և սիրելի է սոցիալիստական հայրենիքը: Սհա թե ինչու աշխատավոր մասսաները խանդավառ սիրով են սիրում իրենց առաջնորդ ընկեր Ստալինին:

Կուսակցության և նրա առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ համարձակ քայլերով առաջ, դեպի կոմունիզմ:

---

1 Ստալին, ԽՍՀ Մեծության Սահմանադրության նախագծի մասին, էջ 63, Հայկուսհրատ, 1936 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ինչ ձեռք բերին ԽՍՀՄ բանվորները	5
Կոլտնտեսական գյուղացիությունը խորհրդային իշխանության հավատարիմ հենարանն է	15
Խորհրդային ինտելիգենցիան	23
ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության յերկիր է	28
Ժողովրդական ստեղծագործության վերելքը	34
ԽՍՀՄ հզոր տերություն է	38
Կոմունիստական կուսակցությունը աշխատավորների ավանգարդն է	42

Пров. 1940 г.

8564

Թարգմ. Ա. Ղարագյուլյան
Թարգմանությունը խմբագրել է Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնարող սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտ № 6592, հրատ. № 555
Պատվեր № 58, տիրաժ 15.000
Հանձնված է արտադրության 3/IV 1938 թ.
Ստորագրված է տպագրելու 17/IV 1938 թ.
ԳԻՆԸ 45 կ.

Պետհրատ—քաղաքական գրականության հրատարակչության տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0016537

ԳԻՆԸ 45 կ.
234
Ա II 9681
9681

М. И. КАЛИНИН

ЧТО ДАЛА СОВЕТСКАЯ ВЛАСТЬ ТРУДЯЩИМСЯ

Армгиз—Издательство политическ и литературы
ЕРЕВАН, 1938